



Ս. Գալյան, Դ. Թումասյան, Ա. Նիկողոսյան

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական ձեռնարկ
դատավորների, դատախազների և քննիչների համար

ԵՐԵՎԱՆ 2018



Ս. Գալյան, Դ. Թումայան, Ա. Նիկողոսյան

Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները

Ոստմնական ձեռնարկ
դատավորների, դատախազների և քննիչների համար

ԵՐԵՎԱՆ 2019



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

**Եվրոպական միությունը
Հայաստանի քաղաքացիների համար
«Մարդու Իրավունքների Խթանում
և Պաշտպանություն» ծրագիր**

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Սույն հրատարակության մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետների հետ:

Իրականացնող
գործընկերներ



Empowered lives.
Resilient nations.



յուրաքանչյուր երեխայի համար

Ս. Գալյան, Դ. Թումասյան, Ա. Նիկողոսյան. Խոշտանգման քրեա-
իրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները
(ուսումնական ձեռնարկ դատավորների, դատախազների և քննիչների
համար). Երևան, 2019, 86 էջ:

Սույն ձեռնարկը մշակվել է Արդարադատության ակադեմիայի հետ
համագործակցությամբ: Այն լրացնում է ոլորտում կատարված ուսում-
նասիրությունները և հատուկ նախատեսված է դատավորների, դատա-
խազների և քննիչների համար:

Բովանդակություն

Ձեռնարկի մասին	5
Ներածություն	6
Գլուխ 1. Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և տարանջատումն այլ հանցագործություններից	12
1.1. Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը	12
1.2. Խոշտանգման ծանրացնող հանգամանքները	27
1.3. Խոշտանգման տարանջատումն այլ հանցագործություններից	34
Գլուխ 2. Խոշտանգման վերաբերյալ հաղորդումների քննության առանձնահատկությունները քրեական դատավարության սկզբնական փուլում	41
2.1. Խոշտանգման վերաբերյալ հաղորդումը, դրան ներկայացվող պահանջները և դրա հիման վրա քրեական գործի հարուցման առանձնահատկությունները	41
2.2. Խոշտանգման վերաբերյալ հաղորդումները քննող պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք	55
Գլուխ 3. Խոշտանգումների գործերով ՄԻԵԴ պրակտիկայից՝ քննության արդյունավետության չափանիշներ	65
Օգտագործված գրականության ցանկ	79
Հավելված. Օրինակելի պլան խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերի քննության	84

Ձեռնարկի մասին

Խոշտանգումների դեմ պայքարի և դրա իրավական կարգավորման առնչությամբ բազմաթիվ քննարկումներն ու ուսումնասիրությունները փաստում են, որ այս երևույթն առկա է ցանկացած հասարակությունում և դրա դեմ պայքարը պետք է լինի արդյունավետ համագործակցության արդյունք: Այս ձեռնարկն ամփոփում է դատավորների, դատախազների և քննիչների հնարավոր վարքագիծը խոշտանգումների կանխարգելման ու նման դեպքերի քննության գործում՝ սահմանելով, որ դեպքերում և ինչպիսի փաստական հանգամանքերի առկայության դեպքում նման գործողություններ իրականացնողները կենթարկվեն պատասխանատվության: Ձեռնարկը նաև պարունակում է ընթացակարգային մակարդակում խոշտանգումների դեմ պայքարի վերաբերյալ պրակտիկ խորհուրդներ, որոնք հիմնված են լավագույն փորձի և ՄԻԵԴ-ի նախադեպերի վրա:

Ձեռնարկում ներկայացված է խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և տարանջատումն այլ հանցագործություններից, խոշտանգման վերաբերյալ հաղորդումների քննության առանձնահատկությունները քրեական դատավարության սկզբնական փուլում, ինչպես նաև խոշտանգումների գործերով ՄԻԵԴ պրակտիկայից՝ քննության արդյունավետության չափանիշները:

Այս ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև փաստաբանների, այլ իրավաբանների, կալանավորվածների, դատապարտյալների, իրավապաշտպան գործունեություն ծավալող այլ անձանց համար, քանի որ ձեռնարկում ներկայացված ձևակերպումները, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձևերի դեմ պայքարում ՄԻԵԴ-ի դիրքորոշումները, ներկայացված են ընդհանուր համատեքստում:

Ներածություն

Խոշտանգման արգելքը սահմանող նորմերի հիմնարարությունը բխում է դրանց բացարձակ լինելուց, քանի որ խոշտանգման արգելքը պետք է գործի անկախ տուժողի վարքագծից, այսինքն՝ բացառություններ նախատեսված չեն, և անթույլատրելի է դրանից ցանկացած շեղում անգամ պատերազմի ժամանակ կամ անձի կյանքին սպառնացող ցանկացած այլ իրավիճակում¹:

Խոշտանգումների արգելքը կրում է բացարձակ բնույթ (jus cogens): Այդ հարցին անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը դեռ 1996թ.-ին Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործով՝ նշելով, որ անգամ կազմակերպված հանցավորության դեմ պայքարելիս արգելված են խոշտանգումները, դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը: Սաադին ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ ահաբեկչության վտանգը չի կարող կասկածի տակ դնել այս արգելքի բացարձակ լինելու հանգամանքը:

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

ՀՀ քրեական օրենսգրքի² 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Խոշտանգման բացարձակ արգելքի՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրումը բխում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված հիմնարար միջազգային փաստաթղթերից:

Միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի պահանջներին համապատասխան՝ արգելվում են խոշտանգումները, բժշկական և գիտական փորձերի ենթարկելն առանց անձի կամավոր համաձայնության: Այս ամենը փաստում է սոցիալական մոտեցման առաջնայնության վերաբերյալ մարդկայինի համեմատ³:

1 Sէն, Berlinski v. Poland (Application no.27715/95), 20 June 2002, պ. 62:

2 Այսուհետ՝ քր. օր:

3 Sէն, Воеводин Л.Д. Юридический статус личности в России. М.: Изд-во МГУ,

Խոշտանգումների արգելքը բացարձակ է, և ոչ մի բացառիկ հանգամանք չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում:

Խոշտանգումների արգելքը սահմանված է Մարդու իրավունքների 1948թ.-ի համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների 1966թ.-ի միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիայում⁴, Բանտարկյալների հետ վարվեցողության 1957թ.-ի նվազագույն ստանդարտ կանոններում, Իրավապահ մարմինների պաշտոնյա անձանց վարքի 1979թ.-ի կանոններում, Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության 1988թ.-ի սկզբունքների ժողովածուում և միջազգային այլ ակտերում:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ միջազգային հանրությունն առանձնացրել է առանձնահատուկ ակտեր, որոնք բացառապես կամ հիմնականում վերաբերում են խոշտանգումներին: Մասնավորապես, դրանք են՝ Խոշտանգումներից և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին 1975թ.-ի հռչակագիրը, Ձերբակալվածներին և կալանավորվածներին խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանող բժշկական անձնակազմի, հատկապես բժիշկների դերին առնչվող բժշկական էթիկայի 1982թ.-ի սկզբունքները, Խոշտանգումների և դաժան, անմարդկային և արժանապատվության նվաստացնող վերաբերմունքի ու պատժի արդյունավետ հետաքննության և փաստագրման 1999թ.-ի սկզբունքները (Ստամբուլի արձանագրություն): Այդ ակտերի շարքում իր ուրույն դերն ունի Խոշտանգումների և դաժան, անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984թ.-ի կոնվենցիան⁵:

Խոշտանգումների դեմ կոնվենցիայի հիման վրա գործում է Խոշտանգումների դեմ հանձնաժողովը⁶, իսկ Հայաստանը, հանդիսանալով

Индра-М, Нормы, 1997, էջ 65:

4 Այսուհետ՝ ՄԻԵԿ:

5 Այսուհետ՝ Խոշտանգումների դեմ կոնվենցիա:

6 Խոշտանգումների դեմ հանձնաժողովը կազմված է 10 անկախ փորձագետներից և ստեղծվել է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի համաձայն: Հանձնաժողովն ուսումնասիրում է մասնակից պետությունների

այս միջազգային պայմանագրի կողմ, ճանաչում է հանձնաժողովի իրավասությունը՝ իր իրավասության ներքո գտնվող անձանցից ստացված հաղորդումները ստանալու և հաշվի առնելու համար, որոնք պնդում են, որ կոնվենցիայի դրույթների վերաբերյալ մասնակից պետությունների կողմից խախտումներ են արձանագրվել:

Ինչպես նշվել է, խոշտանգումների արգելքը կրում է բացարձակ բնույթ: Անձը կարող է խոշտանգման կամ դաժան վերաբերմունքի այլ ձևերի ենթարկվել ցանկացած վայրում, սակայն վրանգն առավել մեծ է, երբ անձը գտնվում է անազապրության պայմաններում կամ նրա մասնակցությամբ կատարվում են քննչական կամ դատավարական գործողություններ, մասնավորապես՝ նա հարցաքննվում է կամ բացապրություններ փախի:⁷

Միջազգային փաստաթղթերի բազմազանությունը և դրանցում ներկայացված կարգավորումները հանգեցրեցին նրան, որ ՀՀ քր. օր.-ում 09.06.2015թ.-ի ՀՕ-69-Ն օրենքով լրացվեց 309.1-րդ հոդվածը, որով խոշտանգման հոդվածը համապատասխանեցվեց կոնվենցիոն պահանջներին: Այդ հոդվածի համաձայն՝ քրեորեն պատժելի է պաշտոնա-

կողմից ներկայացված հաշվետվությունները կոնվենցիայի պահանջների կատարման մասին և մշակում եզրափակիչ դիտարկումներ: Հանձնաժողովը կարող է քննարկել անհատական բողոքներ, եթե մասնակից պետությունը համաձայն է այդ ընթացակարգի հետ եւ արել է համապատասխան հայտարարություն կոնվենցիայի 22-րդ հոդվածի համաձայն: Գոյություն ունի նաեւ կոնվենցիայի 20-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգ, որի համաձայն հանձնաժողովը կարող է նշանակել հետաքննություն, եթե գտնի, որ «առկա են հիմնավոր տվյալներ՝ մասնակից պետության տարածքում խոշտանգումների պարբերաբար կիրառվելու առնչությամբ»:

7) Խոշտանգման հիմնախնդիրներին է անդրադարձել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, այդ կապակցությամբ իրավական դիրքորոշումներ են արտահայտել հետևյալ որոշումներում՝

- 1) Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի և Արայիկ Զալյանի վերաբերյալ 22.12.2006 թ. ՎԲ-176/06 գործով,
- 2) Արայիկ Գոյանի վերաբերյալ 12.02.2010 թ. ԵԱԲԴ/0049/01/09 գործով,
- 3) Ալիկ Մաթևոսյանի վերաբերյալ 26.03.2010 թ. ՎԲ-04/10 գործով,
- 4) Սվետլանա Գրիգորյանի վերաբերյալ 11.05.2011 թ. ԵԿԴ/0281/01/10 գործով,
- 5) Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ 01.11.2012 թ. ԱՐԴ/0176/01/11 գործով,
- 6) Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ 28.11.2013 թ. ՎԲ-05/13 գործով,
- 7) Ռուզաննա Նիզալյանի վերաբերյալ 31.05.2014 թ. ԵԿԴ/0118/11/13 գործով,
- 8) Իլլարիոն Նունուշյանի վերաբերյալ 05.06.2015 թ. ԵՇԴ/0070/01/13 գործով:

տար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Խոշտանգումը՝ որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածում, իսկ ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածում որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ կիրառելը: Այսինքն, խոշտանգմանը բնորոշ հատկանիշներ, բացի ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածից նախատեսված են նաև այլ հոդվածներում:

Ակնհայտ է, որ խոշտանգումը երկօբյեկտ հանցագործություն է՝ ուղղված թե՛ պետության, թե՛ անձի դեմ: Սակայն, ինչպես նշում է Յ.Ս. Պեստերովան՝ խոշտանգման օբյեկտն առողջությունն է, իսկ խոշտանգումների դեմ կոնվենցիայի համաձայն՝ խոշտանգման օբյեկտ կարող են լինել նաև այլ բարիքներ, օրինակ՝ արդարադատության շահերը, պետական մարմիններում ծառայությունը և այլն:⁸

Խոշտանգումը կարող է ուղղվել ոչ միայն տուժողից տեղեկատվություն ստանալուն, այլ նաև հանդես գալ որպես երրորդ անձանց նկատմամբ ապօրինի ներգործության միջոց՝ ահաբեկման, հարկադրանքի ձևով: Բացի այդ, խոշտանգումների շարժառիթ կարող է հանդիսանալ ցանկացած տեսակի խտրականությունը:⁹

8 Տե՛ս, Пестерева Ю.С. К вопросу о понятии пытки// Новая редакция УК России: попытка теоретического осмысления: Материалы межвуз. научн. конф. Омск: Омская академия МВД, 2011, էջ 76:

9 Տե՛ս, Соловьёва Д.Р., Семькина Л.А. Проблемы квалификации истязания с применением пытки// Донецкие чтения 2017: Русский мир как цивилизационная основа научно-образовательного и культурного развития Донбасса: Материалы Международной научной конференции студентов и

Արարքի քրեականացումից հետո արդեն առկա են հարուցված քրեական գործեր, որոնք դեռ սակավաթիվ են: Դատական դեպարտամենտի վիճակագրության համաձայն՝ 2017թ.-ին դատարաններում քննվել է ՀՀ քր. օր-ի 309.1-րդ հոդվածով հարուցված 1 քրեական գործ, որի վարույթը փոխանցվել է 2018թ.:

2015 թվականի հունիսի 9-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 31-ը ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի հատկանիշներով քննվել է 100 քրեական գործ, որից՝

- 2 քրեական գործ 2 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (29.11.2017թ.-ին և 17.07.2018թ.-ին),
- 71 քրեական գործով վարույթը կարճվել է¹⁰,
- 5 քրեական գործով վարույթը կասեցվել է,
- 7 քրեական գործ միացվել է այլ քրեական գործի,
- 1 քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության,
- 2 քրեական գործի հարուցման որոշում վերացվել է,
- 12 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Հաշվի առնելով թե՛ արարքի քրեականացման հանգամանքը, թե՛ դեպքերի առնչությամբ հաղորդումների աճը՝ խիստ անհրաժեշտ է համակողմանի կազմակերպել դատավորների, դատախազների և քննիչների մասնագիտացումն այս հարցի կապակցությամբ: Այդ իսկ պատճառով սույն ձեռնարկի նպատակն է ներկայացնել խոշտանգման քրեաիրավական բնութագիրը, տարանջատել այդ հանցագործությունը հարակից

молодых ученых (Донецк, 17-20 октября 2017 г.). Том 7: Юридические науки. Ч. 2: Уголовное право и процесс, административное и финансовое право/ Под общей редакцией проф. С.В. Беспаловой. Донецк: Изд-во ДОНУ, 2017, էջ 199:

- 10 Անձանց արարքում հանցակազմի բացակայության հիմքով կարճված քրեական գործերը կարելի է դասակարգել երկու խմբի՝ Գործեր, որոնցով ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձանց մոտ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել և ապացույցներ բավարար համակցությամբ չեն ապացուցվել ինչպես խոշտանգման, այնպես էլ սուտ մատնություն կատարելու փաստերը, Գործեր, որոնցով ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձանց մոտ թեև հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, սակայն ապացույցների բավարար համակցությամբ չեն ապացուցվել ինչպես խոշտանգման, այնպես էլ սուտ մատնություն կատարելու փաստերը:

հանցագործություններից, ընդգծել այդ դեպքերով հարուցված քրեական գործերի քննության առանձնահատկությունները, ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի¹¹ խոշտանգումների գործերով պրակտիկան և համապատասխան չափորոշիչները:

Ձեռնարկում ներկայացված են դատավորների, դատախազների և քննիչների պրակտիկ աշխատանքի համար անհրաժեշտ տեղեկություններ՝ ձեռնարկին առավել գործնական բնույթ հաղորդելու նպատակով:

11 Այսուհետ՝ ՄԻԵԴ:

ԳԼՈՒԽ 1.

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄՆ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1.1. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Խոշտանգումների դեմ արդյունավետ պայքարի միջոցն առաջին հերթին այդ արարքի համար քր. օր.-ով համաչափ պատիժ նախատեսող հանցակազմն է:

Այսպես, ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածի համաձայն՝ խոշտանգում է համարվում՝ պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրոմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Խոշտանգման հանցակազմը զետեղված է ՀՀ քր. օր.-ի «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում, որտեղ ներառված հանցագործություններից մեծ մասին բնորոշ է հատուկ սուբյեկտը՝ պաշտոնատար անձը:

Այս հանցագործությունը երկօբյեկտ է, որպես հիմնական օբյեկտ հանդես են գալիս պետական ապարատի նորմալ գործունեությունն ապահովող, իսկ որպես լրացուցիչ՝ մարդու կյանքը, առողջությունը, արժանապատվությունը, անձեռնմխելիությունն ապահովող հասարակական հարաբերությունները:

Հանցագործության օբյեկտիվ կողմը երկընտրելի է, կարող է դրսևորվել՝

- ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելով,

- հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով:

Թեև նշված երկու գործողությունները հոդվածի դիսպոզիցիայում բաժանված են «կամ» շաղկապով, գործնականում, սակայն, չի բացառվում դրանց միաժամանակյա առկայությունը, քանի որ ցավը և տառապանքը փոխկապակցված զգացողություններ են: Պատճառվող ֆիզիկական ցավի ուժգնությունը, ինչպես նաև դրա տևականությունը կարող են անձի մոտ առաջացնել նաև հոգեկան տառապանք:

Հարկ է նկատել, որ ֆիզիկական ցավի ու հոգեկան տառապանքի աստիճանն ու բնույթը որոշելը չափազանց կարևոր է, քանի որ վերը նշված կոնվենցիաների իմաստով, ինչպես նաև ՄԻԵԴ-ի որոշումների համաձայն՝ միայն ցավի կամ տառապանքի պատճառումը դեռ բավարար չէ խոշտանգման մասին խոսելու համար:

Խնդիրը նրանում է, որ խոշտանգումների և արգելված վերաբերմունքի կամ պատժի այլ ձևերի տարբերակումը հիմնականում բխում է պատճառված տառապանքի ծանրության աստիճանից. խոշտանգումը վատ վերաբերմունքի խորապես գիտակցված և ամենածանր դրսևորումն է, ուստի, **այն դեպքերում, երբ վատ վերաբերմունքն իր դաժանությամբ և ինտենսիվությամբ չի եղել այնպիսին, որ պատճառի ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք, կարող է խոսք գնալ ոչ թե խոշտանգման, այլ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի մասին:**

Թերևս, այս հանգամանքով է պայմանավորված քննարկվող հոդվածում «ուժեղ» բառի նախատեսումը, որը թեև գործնականում դժվարացնում է նմանատիպ գործերի քննությունը՝ պայմանավորված հասկացության գնահատողական լինելով, բայց, միևնույն ժամանակ, կողմնորոշիչ նշանակություն է ունենում՝ խոշտանգումն այլ արարքներից տարբերակելու հարցում:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ միջազգային պայմանագրերում ֆիզիկական ցավի կամ տառապանքի հստակ սահմանումը բացակայում է:

Տառապանքը հոգեբանության մեջ բացատրվում է որպես մարդու բացասական ապրումներից առաջացող հուզական վիճակն արտահայտող հոգեվիճակ, որն ի հայտ է գալիս՝ հոգեկան ներգործության ազդեցությամբ և խորապես ազդում է անձի առողջական վիճակի, տրամադ-

րության և այլ արժեքների վրա¹²:

Տառապանքի ծանրության կամ խորության առումով վճռորոշ կարող են լինել օբյեկտիվ տարրերը, մասնավորապես՝ վերաբերմունքի տևողությունը և դրա պատճառած ֆիզիկական և հոգեկան հետևանքները: Այլ դեպքերում դա կարող է կախված լինել տուժողի սեռից, տարիքից, առողջական վիճակից կամ այլ գործոններից, որոնք ազդում են տուժողի սուբյեկտիվ ընկալման վրա:

Ֆիզիկական ցավի և տառապանքի պատճառման մեխանիզմները կարող են տարբեր լինել. ծեծ, էլեկտրահարում, ձգում, խեղդում, այրվածքների պատճառում, մարմնական վնասվածքների պատճառում և այլն: Խոշտանգման դեպքում ֆիզիկական ցավի, տառապանքի ներքո կարելի է հասկանալ նաև անձին ուժասպառ անելը, որը կարող է արտահայտվել օրինակ՝ սննդից կամ ջրից զրկելով և այլն:

ՄԻԵԴ-ը մի շարք որոշումներում անդրադարձել է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառող արարքերին: Մասնավորապես՝ դատարանը խոշտանգում է համարել՝ մերկացնելը, թևերը մեջքի հետևում կապած՝ թևերից կախելը¹³, երեք օր շարունակվող և կրկնվող հարձակումները և մարմնական վնասվածքներ հասցնելը՝ բռունցքներով, ոտքերով, տարբեր առարկաներով հարվածելը, մազերից բռնած քարշ տալը, ստորացման և սպառնալիքների տարբեր ձևերը¹⁴, ոտքերի ներբաններին հարվածելը (ֆալանգա)¹⁵, էլեկտրահարելը, տաք ու սառը ջրի տակ պահելը, գլխին հարվածելով, երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի սպառնալիքները¹⁶, հրազենով գլխին հարվածելը, բուժօգնությունից զրկելը¹⁷ և այլն: Իհարկե, այս ցանկը սպառնիչ չէ և ցանկացած դեպքում արարքը գնահատվում է կոնկրետ քրեական գործի փաստական հանգամանքներից ելնելով:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ խոշտանգումը կազմված է «շատ ծանր և անգութ տա-

12 Տե՛ս, Романов В.В. Юридическая психология. Курс лекций. էլ. աղբյուր՝ <http://sergvelkovelli.com/yuridicheskaya-psixologiya.html>

13 Տե՛ս, **Aksoy v Turkey (Application no. 21987/93), 18 December 1996.**

14 Տե՛ս, Selmouni v. France (Application no. 25803/94), 25 November 1996.

15 Տե՛ս, Mammadov (Jalaloglu) v. Azerbaijan (Application no. 34445/04), 1 March 2007:

16 Տե՛ս, Akkoc v Turkey (Application no. 22947/93), 9 July 1997:

17 Տե՛ս, İlhan v. Turkey (Application No. 22277/93), 27 June 2000:

ռապանք պատճառող դիտավորյալ անմարդկային վերաբերմունքից», որը հատուկ նպատակ է հետապնդում¹⁸:

Մինչ այսօր, այն դեպքերում, երբ ՄԻԵԴ-ը վճռել է, որ տուժողը ենթարկվել է խոշտանգումների, դրանք վերաբերել են ֆիզիկական բռնություն կամ ֆիզիկական բռնության հետ միաժամանակ հոգեկան տառապանք պատճառելուն:

Այնուհանդերձ, նախադեպային իրավունքից կարելի է եզրակացնել, որ ՄԻԵԴ-ը ընդունում է, որ հոգեկան տառապանքն իրենով կարող է հանդիսանալ խոշտանգում՝ պայմանով, որ այն բավարար չափով ծանր լինի:

Այս մասին է վկայում, ՄԻԵԴ-ի՝ Քեմպբելը և Քոսանսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով որոշման շրջանակներում արտահայտած դիրքորոշումը. «Տուժողի դեմ բռնության սպառնալիքները կարող են դաժան հանդիսանալ այն դեպքերում, երբ այդ սպառնալիքները բավականաչափ իրական են և անմիջական: Խոշտանգման սպառնալիքները կարող են անմարդկային վերաբերմունք հանդիսանալ այն դեպքերում, երբ սպառնալիքն իրական է, անմիջական, և պատճառում է սուր հոգեկան տառապանք:»¹⁹: Սպառնալիքի միջոցով հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու օրինակ կարող է հանդիսանալ հետևյալը՝ անձը երկար ժամանակ պահվում է կալանքի տակ, որի ընթացքում նրան ասում են, որ իր ընտանիքի անդամները կխոշտանգվեն և/կամ կսպանվեն, եթե ինքը չխոստովանի:

Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ը այն դեպքերում, երբ ծեծն առաջացրել է համեմատաբար թեթև մարմնական վնասվածքներ, և երկարաժամկետ ֆիզիկական կամ հոգեբանական ազդեցություն չի եղել, ավելի հակված է որոշել, որ տուժողը ենթարկվել է ոչ թե խոշտանգման, այլ անմարդկային վերաբերմունքի:

Հաճախ, երբ կալանավորները ենթարկվում են ծեծի, նրանք պնդում են, որ իրենց խոշտանգել են: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ ծանրության պահանջվող աստիճանը չկա, կամ երբ խոշտանգման տարրերից որևէ մեկը բացակայում է, ՄԻԵԴ-ը փորձում է պարզել, թե արդյո՞ք

18 Տե՛ս, **Ireland v. United Kingdom (Application no. 5310/71), 18 January 1978.**

19 Տե՛ս, **Campbell and Cosans v. the United Kingdom (Application no. 7511/76; 7743/76), 25 February 1982.**

անձը ենթարկվել է անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի: Այսպես, Դենիզչին և այլք ընդդեմ Կիպրոսի գործով որոշման մեջ նշվել է հետևյալը. «(...) դիմումատուների՝ կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում ոստիկանները դիտավորությամբ նրանց ծանրության տարբեր աստիճանների վատ վերաբերմունքի են արժանացրել: Այնուամենայնիվ, գործով չի հաստատվել, որ ոստիկանների նպատակը խոստովանություն կորզելն էր: Դատարանը նաև նշել է, որ չի կարող հստակորեն որոշել, թե ինչ ձևով են անձինք ծեծի ենթարկվել: Ավելին, Դատարանը չի կարող անտեսել անհատակությունները՝ կապված դիմումատուներից ոմանց պատճառված վնասվածքների ծանրության աստիճանի հետ: Վերջապես, Դատարանը գտնում է, որ չնայած որոշ դիմումատուների կողմից ստացված մարմանական վնասվածքներին, որևէ ապացույց չի ներկայացվել, որը կհավաստեր, որ այդ անձանց նկատմամբ վատ վերաբերմունքը երկարատև հետևանքներ է ունեցել: Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ դիմումատուների նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը չի կարող որակվել որպես խոշտանգում:»²⁰:

Ներպետական օրենսդրությունն, անշուշտ, այս առումով տարբերվում է: Մասնավորապես՝ քննարկվող հոդվածի իմաստով խոշտանգում կարող է համարվել նույնիսկ մեկ հարվածը, քանի որ չի բացառվում, նույնիսկ մեկ հարվածի արդյունքում ֆիզիկական ուժեղ ցավի պատճառման հնարավորությունը:

«< Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մեկ հարվածի քրեաիրավական նշակությանը, նշել է հետևյալը. « (...) հնարավոր են դեպքեր, երբ մեկ հարվածն ավելի ուժգին լինի, քան մի քանիսը: Հարվածների քանակը արարքը որակելու դեպքում էական նշանակություն ունի միայն այն դեպքում, երբ դրա հետևանքով որևէ հանցակազմի հատկանիշ համարվող ֆիզիկական վնաս չի առաջացել: Այսինքն՝ մեկ հարվածը, եթե առաջացնում է, օրինակ՝ առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս, ապա որակվում է ըստ փաստացի վրա հասած հետևանքի, իսկ այն դեպքում, երբ մեկ հարվածը ֆիզիկական ցավ կամ ֆիզիկա-

20 *Sfenu, Denizci and others v. Cyprus* (Applications nos. 25316-25321/94 and 27207/95), 23 May 2001.

կան տառապանք չի պատճառել և այդպիսիք պատճառելու դիտավորությամբ չի բնութագրվում, ապա իր նվազ կարևորության պատճառով այն չի կարող հանցագործություն համարվել: Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մեկ հարվածով ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու կամ այդպիսիք պատճառելու դիտավորության առկայության հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել տուժողի տարիքը, առողջական վիճակը, ինչպես նաև հանցավորի ֆիզիկական տվյալները, հարվածի տեղակայումը, բնույթը և այլ հանգամանքները, որոնք իրենց համակցությամբ կարող են վկայել, որ տուժողին պատճառվել է ֆիզիկական ցավ:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողին մեկ անգամ ուժեղ ցավ պատճառելը կամ պարբերաբար մեկական հարված հասցնելը, անկախ հարվածի ուժգնությունից, կարող է որակվել որպես խոշտանգում, եթե հանցավորը գիտակցել է, որ իր գործողություններով անձին դիտավորյալ կերպով պատճառել է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք: (...)»²¹:

Խոշտանգման օբյեկտիվ կողմի լիարժեք ներկայացման համար առանցքային նշանակություն ունի հանցագործության ավարտման պահի որոշման հարցը: Մի շարք գիտնականներ գտնում են, որ քննարկվող հանցակազմը նյութական է²²: Ումանք կարծում են, որ խոշտանգումը կառուցված է նյութական-ձևական հանցակազմի տեսքով, քանի որ օբյեկտիվ կողմը, բացի հոգեկան բռնությունից, որպես հանցավոր գործունեության ձև նախատեսում է նաև ծեծը կամ առողջությանը թեթև վնաս պատճառելը: Վերջին տեսակետի կողմնակիցների կարծիքով՝ հանցագործությունը համարվում է ավարտված ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու պահից՝ անկախ առողջությանը վնաս հասցնելու կամ չհասցնելու հանգամանքից²³: Գիտնականների մյուս մասը գտնում

21 Տե՛ս, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱԲԴ/0176/01/11 որոշումը:

22 Տե՛ս, Российское уголовное право. Особенная часть. Т. 2: учебник. 3-е изд. /Под ред. Л. В. Иногамовой-Хегай и др. М., 2011. (автор гл. 16); Уголовное право России. Особенная часть: учебник / Под ред. О.Г. Ковалёва. М., 2007 (автор гл. 16); Уголовное право. Особенная часть: учебник для вузов/ Под ред. И. Я. Козаченко и др. М., 1997/ (автор гл. 16):

23 Տե՛ս, Курочкин В. П., Уголовно-правовая характеристика истязания. Сборник

է, որ խոշտանգման հանցակազմը ձևական է և, ի տարբերություն առողջությանը վնաս պատճառելու հանցակազմերի, խոշտանգման դեպքում կարևոր է ոչ թե հետևանքի առաջացումը, այլ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելուն ուղղված գործողությունը կատարելը²⁴: Քննարկված մոտեցումներից ընդունելի է առաջինը, քանի որ խոշտանգման համար պատասխանատվություն նախատեսող հոդվածի ձևակերպումն այնպիսին է, որ հանցավոր արարքի ավարտման համար պարտադիր է հետևանքի՝ ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի առաջացումը, այլապես արարքն ավարտված չի կարող համարվել:

Հատկանշական է այն հանգամանքը, որ մարմնական վնասվածքը՝ որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, նշված չէ հանցակազմում: Իհարկե, նման հետևանքի առաջացումը չի բացառվում, ինչպես նաև չի բացառվում խոշտանգման արդյունքում առողջությանը տարբեր աստիճանի ծանրության վնասների պատճառումը, այնուամենայնիվ, «մարմնական վնասվածք պատճառելու»՝ որպես օբյեկտիվ կողմի եղանակի ամրագրված չլինելը կարող է խնդրահարույց իրավիճակների պատճառ հանդիսանալ: Խնդիրն այն է, որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձը, իր ֆիզիոլոգիական առանձնահատկություններից ելնելով, ընկալունակ չլինի ցավի հանդեպ նույնիսկ այն դեպքում, երբ նրան պատճառվի մարմնական վնասվածք: Բացառված չեն նաև այնպիսի դեպքեր, երբ օրինակ, առողջությանը պատճառված թեթև կամ միջին ծանրության վնասի պատճառման պարագայում տուժողը պնդի, որ ֆիզիկական ուժեղ ցավ չի զգացել: Այս պայմաններում, քանի որ հանցակազմի իմաստով ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի տեսքով հետևանքի առաջացումը պարտադիր է, և հանցագործությունն ավարտված համարելու համար բավարար չեն միայն հանցավորի դիտավորությունն ու նպատակը, չենք կարող խոսել ավարտված խոշտանգման մասին: Իրավիճակն այլ կլիներ, եթե հոդվածում «Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք» բա-

научных трудов профессорско-преподавательского состава по итогам отчетов кафедр по НИР за 2012, № 7, էջեր 167-168:

24 Сեն, Уголовное право России. Особенная часть: учебник/ Под ред. О.Г. Ковалёва. М., 2007, էջ 45:

ներից հետո նշվեր նաև կամ «մարմնական փաստվածք» արտահայտությունը:

Անդրադառնալով խոշտանգման սուբյեկտին, հարկ է նշել, որ այդպիսին կարող է հանդիսանալ՝

- պաշտոնատար անձը,
- պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձը,
- ցանկացած այլ անձը, ով գործել է պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ:

«Պաշտոնատար անձ» հասկացությունը բացահայտված է ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ պաշտոնատար անձինք են համարվում՝

- 1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք,
- 2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

ՀՀ վճռաբեկ դատարանը Համլետ Սահակյանի վերաբերյալ գործով որոշման շրջանակներում անդրադարձ է կատարել «պաշտոնատար անձ» հասկացության օրենսդրական ձևակերմանը՝ նշելով. «(...) իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնավարող այն անձինք, ովքեր իրենցից ծառայական կախվածություն չունեցող, իրենց ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված են կարգադրիչ լիազորություններով:

Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող են համարվում այն պետական ծառայողները, ովքեր ղեկավարում են

իրենց ենթակայության տակ գտնվող ծառայողների գործունեությունը: Այս առումով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ է հանդիսանում յուրաքանչյուր պետական ծառայող, ով իր ենթակայության տակ այլ ծառայողներ ունի, ղեկավարում է նրանց գործունեությունը: Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներն այն անձինք են, ովքեր օժտված են գույքի, նյութական արժեքների տնօրինման, կառավարման լիազորություններով, մասնավորապես, գույքի, նյութական արժեքների պահպանության, վերամշակման, նյութական արժեքների իրացման նկատմամբ հսկողության սահմանման, դրամական միջոցների ստացման, հանձնման և այլ գործառույթներով:

(...) Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ դիտելու համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք նրանք օժտված են իրավական նշանակություն ունեցող, իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթուղթ տրամադրել քաղաքացիներին և դրանով կարգավորել նրանց վարքագիծը: Զուտ մասնագիտական գործառույթներ իրականացնող՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում: Սակայն, եթե նշված անձինք օժտված են նաև կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական լիազորություններով, ապա, այդ լիազորություններն իրականացնելիս հանդիսանում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ:»²⁵:

Քննարկվող հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ նաև պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող ան-

25 Տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանը Համլետ Սահակյանի վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 գործ, կետ 16:

ծը: Հարկ է նկատել, որ ՀՀ քր. օր.-ում նման սուբյեկտ նախատեսված է միայն այս հանցակազմում:

Պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձ կարող է համարվել այն անձը, ով լիազորված է ներկայացնել պետական մարմինը ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում: Ընդ որում՝ պետական մարմնի անունից հանդես գալու իրավունքը պատշաճ կերպով պետք է ամրագրված լինի:

Թեև խոշտանգումն իր էությամբ հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություն է, այնուամենայնիվ, ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածի հանցակազմի դիսպոզիցիայից ուղղակիորեն բխում է, որ քննարկվող հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ ինչպես պաշտոնատար կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձը, այնպես էլ այդպիսին չհանդիսացող ցանկացած այլ անձ, ով գործել է պաշտոնատար անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ դրդմամբ: Այսինքն, խոշտանգման սուբյեկտ է հանդիսանում նաև 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը: Նման հետևությունը հոդվածի տառացի մեկնաբանման արդյունք է: Իրավիճակն այլ կլիներ, եթե գիտությամբ, կարգադրությամբ և դրդմամբ բառերը հոդվածում նախատեսվեին որպես գործողություններ՝ իմանալը, դրդելը, կարգադրելը: Այդ դեպքում միարժեքորեն խոշտանգման կատարող չէր կարող համարվել իշխանական լիազորություններ չունեցող հասարակ քաղաքացին, և որպես այդպիսին կդիտարկվեին միայն պաշտոնատար կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձինք:

Հարկ է նկատել, որ ՀՀ քր. օր.-ի նախագծում քննարկվող հոդվածի ձևակերպումը հենց այդպիսին է: Մասնավորապես, համաձայն ՀՀ քր. օր.-ի նախագծի կարգավորման՝ խոշտանգում է համարվում պաշտոնատար անձի կողմից, իր պաշտոնեական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, կամ իր իշխանությամբ կամ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությամբ պայմանավորված ազդեցությունն օգտագործելով որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ, առողջությանը վնաս կամ հոգեկան տառապանք ապօրինաբար պատ-

ճառելը կամ դրան դրդելը կամ դրա համաձայնություն տալը կամ դրա կապակցությամբ թողտվություն դրսևորելը:

Հատկանշական է, որ քննարկվող հողավածի ներկայիս ձևակերպման պայմաններում խնդրահարույց է այն պաշտոնատար անձի արարքի որակման հարցը, ում դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ գործել է իշխանական լիազորություններ չունեցող անձը: Եթե դրդչության կամ կարգադրության պարագայում առնվազն կարող է խոսք գնալ պաշտոնատար անձի հանցակցության մասին (համապատասխանաբար՝ դրդիչ, կազմակերպիչ), ապա գիտության դեպքում խնդիրը բարդանում է, քանի որ արարքը չի պարունակում հանցակցության որևէ ձևին բնորոշ հատկանիշներ: Նման դեպքում պաշտոնատար անձի արարքում հնարավոր է քննարկել պաշտոնեական լիազորություններն անցնելու կամ պաշտոնեական դիրքը չարաշահելու հանցակազմերի առկայության հարցը²⁶:

Ուշագրավ է, որ եթե չառաջնորդվենք նորմի տառացի մեկնաբանման պահանջով և հիմնվենք միջազգային չափանիշների վրա, խոշտանգման կատարող պետք է համարվի միայն պաշտոնատար անձը:

Միջազգային չափանիշների համաձայն՝ արարքը խոշտանգում որակելու համար պարտադիր է պետության ներկայացուցչի ներգրավվածությունը, ընդ որում՝ ներգրավվածություն ասելով հարկ է ցանկացած դեպքում հասկանալ հենց արարքի կատարում, եթե նույնիսկ բուն արարքը կատարվել է այլ անձի կողմից, սակայն պաշտոնատար անձի դրդմամբ, կարգադրությամբ կամ լռելյայն համաձայնությամբ: Ընդունված է համարել, որ նման դեպքերում իշխանական լիազորություններ չունեցող անձը պաշտոնատար անձի ձեռքում հանդես է գալիս որպես կույր գործիք: Ուստի, եթե որևէ (ոչ պաշտոնատար) անձի արարքը կատարվել է պաշտոնատար անձի խնդրանքով կամ աջակցությամբ, ապա ՄԻԵԴ-ը կարծանագրի, որ տվյալ պետությունը պատասխանատու է ՄԻԵԿ-ով երաշխավորված համապատասխան իրավունքի կամ ազատության խախտման համար²⁷: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՄԻԵԴ-ը կարծա-

26 Մանրամասն կքննարկվի 1.3 պարագրաֆում:

27 Տե՛ս, օրինակ, Riera Blume and others v. Spain (Application no. 37680/97), 14 October 1999, A v. France (Application no. 14838/89), 23 November 1993, և M v. Netherlands (Application no. 39339/98), 8 April 2003, Van Vondel v. Netherlands

նագրեր ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում, եթե պաշտոնատար անձը հասարակ քաղաքացուն դրդեր կամ հրահանգեր պատճառել այնպիսի տառապանք, որը հավասարազոր է խոշտանգմանը, կամ եթե պաշտոնատար անձը թերացել և չի կատարել բոլոր հնարավոր քայլերը նման վերաբերմունքի պատճառումը կանխելու ուղղությամբ:

Անդրադառնալով խոշտանգման սուբյեկտիվ կողմին՝ հարկ է նկատել, որ հոդվածի դիսպոզիցիայում մեղքի ձևն ուղղակիորեն նշված է: Սակայն այս հոդվածում «դիտավորություն» բառի առկայությունն, ըստ էության, որևէ նշանակություն չունի, քանի որ անկախ նրանից, թե հոդվածում նշված կլինի, թե ոչ, արարքը կհամարվի դիտավորությամբ կատարված, քանի որ ՀՀ քր. օր.-ի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա հատկապես նախատեսված է ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասով:

Ինչ վերաբերում է դիտավորության տեսակին, ապա այս առումով տեսական գրականության մեջ հեղինակների մոտեցումները տարբեր են: Ոմանք գտնում են, որ խոշտանգման սուբյեկտիվ կողմը կարող է իրականացվել բացառապես կանխամտածված ձևով, այսինքն՝ միայն ուղղակի դիտավորությամբ²⁸, իսկ որոշ հեղինակների կարծիքով այն կարող է իրականացվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ²⁹:

Չնայած այն հանգամանքին, որ խոշտանգման հոդվածի առնչությամբ գործածվում է միայն «դիտավորություն» արտահայտությունը՝ առանց կոնկրետացնելու դիտավորության տեսակը, այնուամենայնիվ, գտնում ենք, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել բացառապես ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսում է հանրության համար

(Application no. 38258/03), 25 October 2007.

28 Տե՛ս, Кривошеин П. Пытка: понятие и признаки// Уголовное право, 2005, № 5, էջ 41:

29 Տե՛ս, Кабанов П.Н. Уголовная ответственность за побои и истязания: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2006, էջ 8; Чечель Г.И. Жестокий способ совершения преступления против личности: уголовно-правовое и криминологическое исследование. Нальчик: Ставропольское книжное изд-во, 1991, էջ 89:

դրա վտանգավոր հետևանքները և ցանկանում է դրանց վրա հասնելը:

Նշված եզրահանգման հիմք է հանդիսանում հողվածում նշված կոնկրետ նպատակների առկայությունը, ինչը խոշտանգման հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է, և խոշտանգումն առանձնացնում է վատ վերաբերմունքի այլ ձևերից:

Այսպես, որպեսզի արարքը համարվի խոշտանգում, այն պետք է կատարվի հետևյալ նպատակներով կամ դրանցից որևէ մեկով՝

- տուժողից կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով,
- այն արարքի համար պատժելու նպատակով, որը տուժողը կամ երրորդ անձը կատարել է, կամ որի կատարման մեջ կասկածվում, կամ մեղադրվում է,
- տուժողին կամ երրորդ անձին վախեցնելու, կամ որևէ արարք կատարելուն, կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով:

Տուժողից կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակն ուղղված է անձից ցանկացած տեսակի տեղեկատվություն ստանալուն, որի շրջանակներում կարող է ընդգրկվել նաև խոստովանությունը: «խոստովանություն» բառի առանձնակի շեշտադրումը միտված է ինքնախոստովանական ցուցմունք կորզելու դեպքերի բացահայտման կարևորության ընդգծմանը: Սա չի նշանակում, որ այլ պայմաններում, օրինակ՝ այն դեպքում, երբ քրեական գործ դեռևս հարուցված չէ, չենք կարող խոսել այս նպատակի առկայության մասին: Ինչ վերաբերում է «տեղեկություն» հասկացությանը, ապա այն կարող է ընդգրկել ցանկացած ոլորտի վերաբերող ցանկացած տեղեկատվություն:

Հատկանշական է, որ քննարկվող հողվածի իմաստով պարտադիր չէ, որպեսզի տեղեկատվության կրողը հանդիսանա հենց տուժողը: Հանցավորը, տուժողին պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք, կարող է նպատակ ունենալ տեղեկություն կամ խոստովանություն ստանալ այլ անձանցից:

ՄԻԵԿ-ի և Խոշտանգման դեմ կոնվենցիայի կիրառությունից ծագող նախադեպային պրակտիկայի մեծ մասը վերաբերում է հենց այն վերաբերմունքին, որը կիրառվել է՝ նպատակ ունենալով կորզել խոստովանու-

թյուն կամ այլ տեղեկություններ:

Քննարկման առարկա դարձնելով հաջորդ՝ այն արարքի համար պատժելու նպատակը, որը տուժողը կամ երրորդ անձը կատարել է, կամ որի կատարման մեջ կասկածվում, կամ մեղադրվում է՝ հարկ է նկատել, որ նորմի ձևակերպումից պարզ չէ, թե դրանում գործածված «արարք» հասկացությունը բովանդակային առումով վերաբերում է քրեորեն պատժելի, վարչական զանցանք համարվող, թե ցանկացած բնույթի գործողությանը կամ անգործությանը: Այլ կերպ ասած՝ այնքան էլ միանշանակ չէ «արարք» բառի մեկնաբանությունը:

Ուստի, իրավակիրառ պրակտիկայում հարց է ծագում՝ արդյո՞ք խոսքը ցանկացած արարքի մասին է, թե «արարք» ասելով պետք է հասկանալ միայն քրեորեն հետապնդելի արարքը կամ զանցանքը, քանի որ օրենսդրական նորմում հաջորդիվ գործածվում են «կասկածվում է» և «մեղադրվում է» արտահայտությունները, որոնք դատավարական հասկացություններ են և վերաբերելի են միայն քրեորեն պատժելի արարքներին և զանցանքներին:

ՄԻԵԴ-ի մի շարք որոշումներում վերաբերմունքի՝ խոշտանգման աստիճանի հասած լինելու հարցի որոշումը հիմնվում է այն փաստի վրա, որ այն պատճառելու շարժառիթը հանդիսացել է անձին «պատժելը»:

Այսպես, ՄԻԵԴ-ը ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում է արձանագրել այն դեպքերում, երբ պատժելն, ըստ էության, կատարվել է որպես արձագանք գանգատաբերի կողմից կատարված հնարավոր որոշ անօրինական գործողություններին³⁰:

Այնուհանդերձ, այն դեպքերի մեծ մասում, որոնցում ՄԻԵԴ-ը համարել է, որ որոշակի վերաբերմունքի շարժառիթը եղել է պատժելը, ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտման փաստի արձանագրումը հիմնվել է այն հանգամանքի վրա, որ տվյալ վերաբերմունքը միգուցե կամ փաստացի կիրառվել է՝ արձագանքելով տուժողի ամբողջովին օրինական գործողություններին³¹ կամ նրա այնպիսի վարքագծին, որը չէր կարող բնորոշ-

30 Տե՛ս, օրինակ, Vladimir Romanov v. Russia (Application no. 41461/02), 24 July 2008, Virabyan v. Armenia (Application no. 40094/05), 2 October 2012, Cestaro v. It aly (Application no. 6884/11), 7 April 2015.

31 Տե՛ս, օրինակ, Süheyla Aydin v. Turkey (Application no. 25660/94), 24 May 2005.

վել որպես անօրինական³²:

Նմանապես, Խոշտանգման դեմ հանձնաժողովը Խոշտանգման դեմ կոնվենցիայի իմաստով խոշտանգումը համարել է ապացուցված, երբ անձը պատժվել է այնպիսի վարքագծի համար, որը ցանկացած պարագայում պետք է օրինական վարքագիծ համարվի մարդու իրավունքները հարգող պետություններում, մասնավորապես՝ խոսքը վերաբերում է քաղաքական գործունեությանը³³:

Այնուհանդերձ, ամբողջ նախադեպային պրակտիկան (որում պատժի՝ խոշտանգման աստիճանի հասած լինելը որոշելու նպատակով դիտարկվել է պատժին հանգեցրած վարքագծի բնույթը) հիմնականում վերաբերում է տվյալ վերաբերմունքը դրսևորող անձի վարքագծի նպատակին, այլ ոչ թե այն վարքագծին, որին ի պատասխան անձը պատժվել է, ընդ որում՝ այն կարծես էական չէ խոշտանգման արգելքի խախտում արձանագրելու տեսանկյունից:

Այսպիսով, ինչպես պարզ է դառնում ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայից, խոշտանգման փաստը համարվում է հաստատված, եթե կատարվածի շարժառիթը անձին պատժելն է՝ անկախ անձի՝ դրան հանգեցրած համապատասխան գործողությունների քրեորեն պատժելի լինելու կամ չլինելու հանգամանքից:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը՝ քննարկվող հոդվածում տեղ գտած «արարք» հասկացությունը ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի պահանջների և խոշտանգումն արգելող միջազգային այլ չափանիշների համատեքստում մեկնաբանելու պարագայում չպետք է սահմանափակվի ենթադրյալ տուժողի միայն այնպիսի վարքագծով, որը քրեորեն պատժելի է կամ պարունակում է այլ իրավախախտման հատկանիշներ:

Քննարկվող նպատակներից հաջորդը տուժողին կամ երրորդ անձին վախեցնելու, կամ որևէ արարք կատարելուն, կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելն է: Հարկ է նկատել, որ ի տարբերություն նախորդ նպատակի, այս դեպքում «արարք» հասկացության մեկնաբանությունը միանշանակ է, և այն պետք է մեկնաբանել տարածական՝

32 Տե՛ս, օրինակ, Akulinin and Babich v. Russia (Application no. 5742/02), 2 October 2008, Barabanshchikov v. Russia (Application no. 36220/02), 8 January 2009 և Ochelkov v. Russia (Application no. 17828/05), 11 April 2013.

33 T.A. v. Sweden (Application no. 226/2003), 6 May 2005.

դրանում ընդգրկելով ցանկացած, այդ թվում՝ օրինական գործողություն (անգործություն): Հարկադրել ասելով պետք է հասկանալ անձի կամքին հակառակ որևէ գործողության կատարելուն պարտադրելը: Ինչ վերաբերում է «վախեցնել» արտահայտությանը, ապա դրա սահմանները ևս ուրվագծված չեն: Վախեցնելը ցանկացած եղանակով անձի մոտ վախի, տագնապի զգացում առաջացնելն է: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ «վախեցնելու» հիմնական գործիքը, սպառնալիքն է:

Ինչպես արդեն նշվել է, խոշտանգման հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նպատակը, սակայն այդ ընդհանուր պահանջից նախատեսվել է մեկ բացառություն, որը վերաբերում է այն դեպքերին, երբ խոշտանգման օբյեկտիվ կողմը կատարվում է ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով: Վերջինը ոչ թե նպատակ է, այլ հանդիսանում է արարքի կատարման շարժառիթ: Խտրականություն ասելով հարկ է հասկանալ համանման հանգամանքներում չհիմնավորված տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և չի հետապնդում իրավաչափ նպատակ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ խոշտանգման հանցակազմի

- հիմնական օբյեկտը պետական ապարատի նորմալ գործունեությունն ապահովող, իսկ լրացուցիչը՝ մարդու կյանքը, առողջությունը, արժանապատվությունը, անձեռնմխելիությունն ապահովող հասարակական հարաբերություններն են, այսինքն՝ խոշտանգման հանցակազմը երկօբյեկտ է:
- օբյեկտիվ կողմը երկընտրելի է՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը.
- սուբյեկտը թե՛ հատուկ է (պաշտոնատար անձ), թե՛ ընդհանուր.
- սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, և պարտադիր հատկանիշ է հատուկ նպատակը:

1.2. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԾԱՆՐԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Խոշտանգման ծանրացնող հանգամանքները թվարկված են ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասում: Այսպես, խոշտանգումը, որը կա-

տարվել է՝

- երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածու-թյուն ունեցող անձի նկատմամբ,
- ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,
- առանձին դաժանությամբ,
- անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կող-մից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, ինչպես նաև՝
- խոշտանգումը, որն անգուշությամբ առաջացրել է ծանր հետ-ևանքներ հանդիսանում են քննարկվող հանցակազմի ծանրաց-նող հանգամանքներ:

Քննարկման առարկա դարձնելով «խոշտանգումը, որը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ» ծանրացնող հանգամանքը, հարկ է նշել, որ արարքն այս ծանրացնող հանգամանքով պետք է որակ-վի այն դեպքում, երբ հանցավորի միասնական դիտավորությունն ընդ-գրկում է հենց երկու կամ ավելի անձանց խոշտանգելը:

Խոշտանգման քննարկվող տեսակը, ըստ էության, կարելի է նույ-նացնել շարունակվող հանցագործության հետ, որը բաղկացած է մեկից ավելի նույնական գործողություններից, որոնք թեկուզ և առանձին վերց-րած ինքնուրույն հանցակազմ են պարունակում, բայց ընդգրկված են սուբյեկտի միասնական դիտավորության մեջ և ունեն մեկ ընդհանուր նպատակ, և ըստ այդմ, միասին վերցրած դիտվում են իբրև մեկ հանցա-գործություն: Ընդ որում՝ ամենևին պարտադիր չէ, որպեսզի երկու կամ ավելի անձանց խոշտանգումն իրականացվի միաժամանակ կամ մեկը անմիջապես հաջորդի մյուսին: Արարքը կարող է որակվել որպես եր-կու կամ ավելի անձանց խոշտանգում անկախ առաջին խոշտանգումից հետո անցած ժամանակահատվածից, եթե գործով ձեռք բերված ապա-ցույցները հնարավորություն կտան խոսելու խոշտանգումների՝ միասնա-կան դիտավորությամբ կատարված լինելու մասին:

Երկու կամ ավելի անձանց խոշտանգումը չի կարող որակվել ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, եթե առաջին խոշտան-

գումից հետո (մինչև երկրորդի կատարումը) լրացել են վաղեմության ժամկետները:

Հարկ է նշել, որ նշված հարցի հետ կապված այլ մոտեցում ունի ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես՝ Արսեն Արծրունու վերաբերյալ գործով կայացված որոշման շրջանակներում դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.« (...) օրենսդիրը, ընդլայնելով հանցագործությունների իրական համակցության տեսակները (ՀՀ քր. օր.-ի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), այնուամենայնիվ, երկու կամ ավելի անձանց նկատմամբ հանցանք կատարելու համար պատասխանատվություն նախատեսող Հատուկ մասի համապատասխան նորմերից չի հրաժարվել: Այսինքն՝ առկա է օրենսդրորեն հաշվի առնված համակցություն, երբ օրենսդիրը մեկից ավելի հանցանքների կատարումը նախատեսում է որպես հանցակազմի որակյալ հատկանիշ (օրինակ՝ խուլիգանությունը՝ զուգորդված գույքը դիտավորությամբ ոչնչացնելով կամ վնասելով, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն առաջացրել է տուժողի մահ և այլն), որի պարագայում արարքը ենթակա է որակման ՀՀ քր. օր.-ի հատուկ մասում նախատեսված համապատասխան որակյալ հանցակազմով և ոչ թե հանցագործությունների համակցության կանոններով:

Կրկնակիության ինստիտուտի վերացումից հետո ՀՀ քր. օր.-ում երկու կամ ավելի անձանց նկատմամբ հանցանք կատարելու համար պատասխանատվություն նախատեսող նորմերի առկայությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը հաշվի է առել այս որակյալ հատկանիշի հանրային վտանգավորությունը և բացառել է, օրինակ՝ երկու կամ ավելի անձանց սպանության դեպքում արարքը ՀՀ քր. օր.-ի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ համակցության ընդհանուր կանոնով որակելու հնարավորությունը³⁴»:

Այսինքն, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի մեկնաբանության, անկախ միասնական դիտավորության առկայությունից, եթե արարքը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ, և եթե ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի համապատասխան նորմը նախատեսում է երկու կամ ավելի ան-

34 Տես, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արսեն Արծրունու վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0126/13/11 գործով որոշումը:

ձանց նկատմամբ արարքը կատարելը որպես ծանրացնող հանգամանք, ապա պետք է հիմք ընդունել հենց այդ կարգավորումը և կարիք չկա դեկավարվել հանցագործությունները համակցությամբ որակելու ՀՀ քր. օր.-ի ընդհանուր մասի կանոններով:

Չնայած այս հանգամանքին՝ առավել ընդունելի է քննարկվող ծանրացնող հանգամանքով որակել միայն այն դեպքերը, երբ երկու կամ ավելի անձանց խոշտանգելը ընդգրկված է եղել հանցավորի միասնական դիտավորության մեջ: Հակառակ դեպքում, հարկ է արարքները որակել ՀՀ քր. օր.-ի 20-րդ հոդվածով սահմանված կանոններով:³⁵

ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված խոշտանգումը, որը կատարվել է անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ:

Անչափահասի խոշտանգումն առկա է այն դեպքում, երբ հանցավորը հաստատապես իմացել է տուժողի չափահասության տարիքին հասած չլինելու հանգամանքի մասին:

Հանցավորից տուժողի նյութական կախվածությունը կարող է պայմանավորված լինել ցանկացած այնպիսի իրադրությամբ, երբ հանցավորից է կախված տուժողի նյութական վիճակի բարելավումը կամ վատթարացումը:

Այլ կախվածության հիմքում կարող են ընկած լինել, օրինակ, ամուսնական հարաբերությունները, գործատուի և աշխատողի փոխհարաբերությունները, վերադասից ստորադասի ծառայողական կախվածությունը և այլն:

Հաջորդ ծանրացնող հանգամանքը խոշտանգումն ակնհայտ հղի կնոջ նկատմամբ կատարելն է: Այս արարքի հանրային բարձր վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ հանցավորն այս դեպքում, ըստ էության, միաժամանակ ոտնձգում է երկու արժեքի դեմ: Հանցավորը պետք է հաստատապես իմանա, և նրա համար պետք է ակնհայտ լինի, որ խոշտանգում է հղի կնոջը, իսկ եթե հանցավորը չի իմացել տուժողի հղիության փաստի մասին, ծանրացուցիչ այլ հանգամանքների

³⁵ Հարցը վերջնական կարգավորում կստանա ՀՀ քր. օր.-ի նախագծի ընդունմամբ, որտեղ «երկու կամ ավելի անձանց նկատմամբ» ծանրացնող հանգամանքն առհասարակ նախատեսված չէ:

բացակայության պայմաններում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 309.1-ի 1-ին մասով՝ որպես հասարակ խոշտանգում: Իմանալու աղբյուրը որևէ նշանակություն չունի արարքի որակման համար, բավարար է միայն իմանալու փաստի հաստատումը:

Հաջորդ ծանրացնող հանգամանքն է արարքը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարելը:

Հատկանշական է, որ այս ծանրացնող հանգամանքի մասին կարելի է խոսել ինչպես հանցավոր խմբի՝ հանցանք կատարելու մասին նախնական համաձայնության առկայության, այնպես էլ՝ բացակայության պայմաններում: Ըստ ՀՀ քր. օր.-ի 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես չեն պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին, իսկ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված է համարվում այն դեպքում, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

Խոշտանգման՝ մի խումբ անձանց կողմից կատարելու հանրային բարձր վտանգավորությունը կայանում է նրանում, որ այդ դեպքում նվազագույնի է հասցվում տուժողի՝ իրեն պաշտպանելու հնարավորությունը, շեշտակիորեն ավելանում է տուժողի մոտ վախի, տագնապի, անկարողության զգացումը:

ՀՀ քր. օր.-ի հոդված 309.1-ի 2-րդ մասի 4-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում նաև կազմակերպված խմբի կողմից խոշտանգման կատարման համար: Ի տարբերություն մի խումբ անձանց՝ արարքը կորակվի կազմակերպված խմբի կողմից կատարված նույնիսկ այն դեպքում, երբ խոշտանգման օբյեկտիվ կողմն իրականացվել է խմբի թեկուզ մեկ անդամի կողմից: Այս դեպքում համակատարումը պարտադիր չէ:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 309.1-ի 2-րդ մասի 4-րդ կետում, ինչպես և ընդհանրապես ՀՀ քր. օր.-ի հատուկ մասում, հանցավոր համագործակցության կողմից հանցանք կատարելը՝ որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, նախատեսված չէ:

Սակայն, ինչպես գիտենք, քրեական իրավունքում գործում է հետևյալ կարևոր սկզբունքը. եթե հատուկ մասի որևէ հոդվածում որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ ձև, ապա հանցակցության առավել վտանգավոր ձևերով հանցանք կատարելու դեպքում արարքը պետք է որակել հոդվածի համապատասխան մասով: Հետևաբար, քանզի հոդվածի քննարկվող կետում նախատեսված են խոշտանգումը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարելու դեպքերը, պետք է ենթադրել, որ հանցավոր համագործակցության կողմից կատարված խոշտանգումը ևս ենթակա է որակման որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված: Հանցավոր համագործակցության կողմից կատարված խոշտանգումը որակելիս պետք է հիմք ընդունել կազմակերպված խմբի կողմից խոշտանգման որակման վերաբերյալ վերը նշված մոտեցումները:

Հաջորդ ծանրացնող հանգամանքն արարքն առանձին դաժանությանը կատարելն է: Առանձին դաժանությունը դրսևորվում է խոշտանգելիս տուժողին առանձնակի ֆիզիկական կամ հոգեկան տառապանքներ պատճառելու մեջ: Ընդ որում՝ առանձին դաժանությունը ենթադրում է հանցագործի դիտավորության մեջ տուժողին հենց նման եղանակով ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու մտադրության առկայություն: Առանձին դաժանության դրսևորում կարող են համարվել այն դեպքերը, երբ տուժողը տանջահարվում է այնպիսի եղանակի կիրառմամբ, որը հանցավորի համար ակնհայտորեն կապված է իր զոհին անխուսափելի տանջանքներ պատճառելու հետ (մեծ քանակի մարմնական վնասվածքներ հասցնելը, ֆալանգան, ձգումը, սննդից երկարատև ժամանակով զրկելը և այլն): Առանձին դաժանության դրսևորում կարող է համարվել նաև անձին իր մերձավորի ներկայությամբ խոշտանգելը, ինչը կարող է հոգեկան տառապանքներ պատճառել թե՛ տուժողին, թե՛ նրա մերձավորին: Միևնույն ժամանակ, քննարկվող ծանրացնող հանգամանքը չի կարող առկա լինել, եթե խոշտանգումը տեղի է ունենում տուժողի այնպիսի մերձավորների ներկայությամբ, ովքեր հանցավորի համար ակնհայտորեն ի վիճակի չեն գիտակցելու տեղի ունեցածի իմաստը:

Որպես խոշտանգման ծանրացնող հանգամանք նախատեսված է

նաև արարքն անձի կամ նրա մերձավորի նկատմամբ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ:

Ծառայողական գործունեությունն անձի այնպիսի գործունեությունն է, որը մտնում է նրա՝ նորմատիվ իրավական ակտով կամ օրենքով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված ծառայողական պարտականությունների մեջ:

Ինչ վերաբերում է «հասարակական պարտք» հասկացությանը, ապա այն ավելի շատ բարոյական, քան իրավական հասկացություն է և ենթակա է առավել տարածական մեկնաբանության: Այս արտահայտությունը չի կարելի մեկնաբանել միայն որպես անձի վրա դրված որոշակի պարտականություն:

Ամեն դեպքում, ծառայողական գործունեությունը կամ հասարակական պարտքը ենթադրում են իրավաչափ գործունեություն, ուստի խոշտանգումը կհամարվի քննարկվող ծանրացնող հանգամանքով կատարված, եթե իրականացվել է անձի օրինական, իրավաչափ գործունեության կապակցությամբ:

Խոշտանգումը քննարկվող հատկանիշներով որակելու համար որևէ նշանակություն չունի, թե այն կատարվել է տուժողի կողմից իր ծառայողական գործունեությունն իրականացնելու կամ հասարակական պարտքը կատարելու պահին, թե դրանից որոշ ժամանակ անց կամ առաջ: Որակման հիմնական չափանիշը տվյալ դեպքում խոշտանգման կապն է անձի կողմից իր պարտականությունները կատարելու հետ:

Հատկանշական է այն, որ քննարկվող դեպքում հանցագործության տուժող կարող են հանդիսանալ ոչ միայն իր ծառայողական գործունեությունն իրականացնող կամ հասարակական պարտքը կատարող անձինք, այլև նրանց մերձավորները:

Ինչպես արդեն նշվել է, խոշտանգման նպատակներից է նաև անձին իր կամ երրորդ անձի կատարած արարքի համար պատժելու նպատակը: Այս առումով պետք է նշել, որ, եթե հանցավորի նպատակն անձին այն արարքի համար պատժելն է, որը կապված է վերջինիս ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի իրականացման հետ, ապա նրա արարքը պետք է որակվի ոչ թե ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ

հողվածի 1-ին մասով, այլ 309.1-րդ հողվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հողվածի 2-րդ մասի վերջին՝ 7-րդ կետը, պատասխանատվություն է նախատեսում խոշտանգման համար, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

Ծանր հետևանքներ ասելով՝ հարկ է հասկանալ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, տուժողի կամ նրա մերձավորների ինքնասպանությունը, հոգեկան կամ այլ ծանր հիվանդության առաջացումը և այլն:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է բացահայտել, որ ծանր հետևանքներն առաջացել են հենց խոշտանգման արդյունքում, այսինքն՝ պարտադիր է խոշտանգման և առաջացած հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը:

Հարկ է նշել, որ մարդուն խոշտանգելու հետևանքով տուժողին անզգուշությամբ մահ պատճառելն ամբողջովին ընդգրկվում է ՀՀ քր. օր.-ի հողված 309.1.-ի 2-րդ մասի 7-րդ կետի շրջանակներում, և ՀՀ քր. օր.-ի 109-րդ հողվածով արարքի լրացուցիչ որակում չի պահանջվում:

1.3. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄՆ ԱՅՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ խնդիրներ են առաջանում կապված խոշտանգման՝ այլ հանցակազմերից սահմանազատման հետ:

Խոշտանգմանն իր էությամբ ու բովանդակությամբ ամենամոտը ՀՀ քր. օր.-ի 309-րդ հողվածով նախատեսված հանցակազմն է:

ՀՀ քր. օր.-ի 309-րդ հողվածը պատասխանատվություն է նախատեսում՝

- «1. Պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին, պատժվում է (...):
2. Նույն արարքը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ

միջոցներ գործադրելով, պատժվում է (...):

3. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, պատժվում է (...):»:

Այս հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ պաշտոնատար անձը: Հանցագործությունը նյութական է. ավարտված համարելու համար պարտադիր է էական վնասի առաջացումը, ընդ որում, չի բացառվում, որ այն դրսևորվի անձի առողջությանը պատճառված վնասի, ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի ձևով, քանի որ այս հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է կատարվել բռնության գործադրմամբ:

Այս հանցակազմում, փաստորեն, խոշտանգման նմանությամբ առկա է հատուկ սուբյեկտ, բռնության գործադրման հնարավորություն, որը կարող է առաջացնել նաև խոշտանգման հոդվածում նշված հետևանքները՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք:

Խոշտանգման և պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմերի հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ խոշտանգման դեպքում արարքը կատարվում է հատուկ նպատակով:

Ուստի, խոշտանգման հանցակազմն առկա կլինի, եթե ֆիզիկական ուժեղ ցավը կամ հոգեկան ուժեղ տառապանքը պատճառվի հետևյալ նպատակներից առնվազն մեկով՝

- այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով,
- այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է,
- այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով,
- ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Նշված նպատակների բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ով՝ որպես պաշտոնեական լիազորությունների անցում:

ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածով պետք է որակվեն նաև այն դեպքերը,

երբ պաշտոնատար անձը, թեև հետապնդում է վերոհիշյալ նպատակներից առնվազն մեկը, բայց ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք չի պատճառում տուժողին: Իհարկե, խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվում է, որ հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել տուժողին ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելուն, որպիսիք չեն առաջացել հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Նման դեպքերում արարքը հարկ է որակել ոչ թե ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածով, թեև նկարագրված արարքը պարունակում է այդ հոդվածի բոլոր հատկանիշները, այլ խոշտանգման փորձ՝ հիմք ընդունելով անձի դիտավորության ուղղվածությունը և իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին հասցնելու անհնարինությունը:

ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածով պետք է որակվեն նաև այն դեպքերը, երբ պաշտոնատար անձը, թեև հետապնդում է խոշտանգման՝ վերը նշված նպատակներից առնվազն մեկը և փաստացի ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք է պատճառում տուժողին, բայց չի ունենում նման ցավ կամ տառապանք պատճառելու դիտավորություն:

Այսպիսով՝ խոշտանգումն, ըստ էության, պաշտոնեական լիազորություններն անցնելու մասնավոր դրսևորում է, որը նախատեսված է հատուկ նորմով:

Հետևաբար, եթե պաշտոնեական լիազորություններն անցնելը դրսևորվել է խոշտանգման ձևով, արարքը պետք է որակել վերոնշյալ հատուկ նորմով՝ որպես խոշտանգում:

ՀՀ քր. օր.-ի հաջորդ հանցակազմը, որից կարիք է առաջանում սահմանազատել խոշտանգումը, 341-րդ հոդվածով նախատեսվածն է (դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը):

Այդ հոդվածի համաձայն՝

«1. Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից բռնություն կամ սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն կամ փորձագետին կեղծ

եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը՝ պատժվում է (...):

2. Նույն արարքը, որը զուգորդվել է խոշտանգմամբ, պատժվում է (...):
3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
 - 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
 - 2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,
 - 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
 - 4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,
 - 5) առանձին դաժանությամբ,
 - 6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,
 - 7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝ պատժվում է (...):»:

Եթե խոշտանգման և պաշտոնեական լիազորություններն անցնելու պարագայում առաջինը համարվում է երկրորդի մասնավոր դրսևորումը, ապա այս դեպքում որոշակի առումով հենց քննարկվող հոդվածով նախատեսված արարքն է խոշտանգման մասնավոր դրսևորում հանդիսանում:

Նախևառաջ, անհրաժեշտ է նշել, որ այս հանցագործությունը ներառված է ՀՀ քր. օր.-ի «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում, որում ընդգրկված հանցագործություններից շատերը հանդիսանում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների մասնավոր դրսևորումներ:

Քննարկվող նորմը հատուկ է ինչպես սահմանափակ սուբյեկտային կազմի, այնպես էլ հնարավոր տուժողների առումով:

Մասնավորապես՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 341-ով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող են լինել դատավորը, դատախազը, քննիչը կամ հետաքննություն կատարող անձը, իսկ տուժող՝ ցուցմունք կամ բացատրություն տվող անձը, փորձագետը, թարգմանիչը կամ վկան:

Քննարկվող հոդվածների տարանջատման բարդությունը հիմնականում կայանում է, որ երկու դեպքում էլ հանցակազմերի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել բռնության գործադրմամբ: Բացի այդ, խառնաշփոթ առաջանում է կապված այն հանգամանքի հետ, որ ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել ցուցմունք տալուն հարկադրելով, իսկ խոշտանգման հանցակազմում նախատեսված է խոստովանությունն ստանալու նպատակը:

Գործնականում բացառված չէ, որ խոստովանությունը մեկնաբանվի որպես ցուցմունքի մասնավոր դրսևորում՝ նույնացնելով խոստովանությունն ու ինքնախոստովանական ցուցմունքը և արարքին գնահատական տալիս նախապատվությունը տրվի խոշտանգման հոդվածին՝ որպես այս առումով հատուկ նորմ: Նման մոտեցումը, սակայն, ընդունելի չէ:

ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածում առկա խոստովանություն հասկացությունը հարկ է մեկնաբանել տարածական կերպով՝ բացառելով դրա և ինքնախոստովանական ցուցմունքի նույնացումը և, հիմք ընդունելով այն, որ ինչպես արդեն նշվել է ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածն ավելի է մասնավորեցնում ՀՀ քր. օր.-ի հոդված 309.1-ում նկարագրված հանցագործությունը՝ պայմանավորված սուբյեկտների և տուժողների սահմանափակ կազմով, նախապատվությունը պետք է տրվի ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածին:

ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի ծանրացնող հանգամանք է հանդիսանում նույն արարքը, որը զուգորդվել է խոշտանգմամբ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված ծանրացնող հանգամանքի ձևակերպման մեջ նշվել է «զուգորդվել» բառը, որպիսի պարագայում ընդունված է արարքները որակել հանցագործությունների համակցությամբ: Այսպես, օրինակ՝ ավազակության ժամանակ տուժողին դիտավորությամբ կյանքից զրկելու դեպքում հանցավորի արարքը որակվում է ավազակություն և սպանություն՝ զուգորդված ավազակությամբ:

Քննարկման առարկա չդարձնելով նման մոտեցման իրավաչափությունը՝ հարկ է նշել, որ ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասով արարքը որակելու պարագայում կարիք չկա անձի արարքը որակել նաև ՀՀ

քր. օր.-ի հոդված 309.1-ով, քանի որ նշված հոդվածներում նկարագրված արարքներն ամբողջությամբ նույնանում են:

Այսպիսով՝ այն դեպքերում, երբ խոշտանգումը կատարում է դատավորը, դատախազը, քննիչը կամ հետաքննություն կատարող անձը՝ ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար, արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի ոչ թե հոդված 309.1-ով, այլ հոդված 341-ի 2-րդ կամ 3-րդ մասով (եթե առկա են առավել ծանրացնող հանգամանքներ):

Խոշտանգումը պետք է սահմանազատել նաև ՀՀ քր. օր.-ի հոդված 119-ով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) նախատեսված հանցագործությունից:

ՀՀ քր. օր.-ի 119-րդ հոդվածը սահմանում է.

«1. Անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, պատժվում է (...):

2. Նույն գործողությունները, որոնք կատարվել են՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,
- 3) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի, ինչպես նաև առևանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ,
- 4) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- 5) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,
- 6) առանձին դաժանությամբ,
- 7) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում են (...):»:

Այս և խոշտանգման հանցակազմերի հիմնական տարբերությունը

կայանում է նրանում, որ այս հոդվածում բացակայում է խոշտանգման սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող նպատակը:

Բացի այդ, ի տարբերություն խոշտանգման, այս հանցագործության սուբյեկտը ընդհանուր է. այդպիսին հանդիսանում է 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Հետևաբար, եթե առկա լինեն ՀՀ քր. օր.-ի հոդված 309.1-ով նախատեսված հանցագործության հատկանիշները (հատուկ սուբյեկտը և նպատակը), ապա արարքը պետք է որակվի հենց այդ հոդվածով: Ընդ որում, եթե նպատակն առկա լինի, բայց սուբյեկտը բացակայի, արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 119-ով:

Ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է, որ ՀՀ քր. օր.-ի 309.1-ով հոդվածով նախատեսված արարքի տարանջատումն այլ հանցագործություններից (հրապարակման ծավալներից ելնելով՝ հնարավոր չէ ներկայացնել բոլոր հարակից հանցագործությունները) պետք է իրականացվի հանցակազմի բոլոր տարրերի մանրակրկիտ վերլուծության հիման վրա:

ԳԼՈՒԽ 2.

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

2.1. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ, ԴՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խոշտանգումների բացարձակ արգելքն իրացնելու պետության պարտավորությունը կարող է ապահովվել միայն խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների արդյունավետ քննության արդյունքում: Միայն դրանք քննության արդյունքում է հնարավոր հաստատել խոշտանգման փաստը և, համապատասխան հիմքերի առկայության դեպքում, մեղավորներին պատասխանատվության ենթարկել՝ ապահովելով տուժողների խախտված իրավունքների վերականգնումը³⁶:

Խոշտանգումների վերաբերյալ հաղորդումները քննելիս պետք է ղեկավարվել թե՛ ՄԱԿ-ի, թե՛ այլ կազմակերպությունների ակտերով: ՄԻԵԴ-ը պետությունների համար սահմանել է խոշտանգման կամ վատ վե-

36 Խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների քննություն իրականացնելիս առկա պարտավորությունների բովանդակությունը և քննության իրականացման չափանիշները համակարգելու նպատակով ՄԱԿ-ի կառույցների կողմից, որի շրջանակներում ընդունվել են ինչպես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, այնպես էլ Խոշտանգումների դեմ կոնվենցիան, մշակվել են մի շարք փաստաթղթեր: Այդպիսի փաստաթղթերի շարքում առաջին հերթին պետք է նշել Խոշտանգումների և այլ դատան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բխող անձանց պաշտպանության մասին հռչակագիրը, Խոշտանգումների և այլ դատան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին սկզբունքները (Ստամբուլյան արձանագրություն), Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն: Միևնույն ժամանակ, խոշտանգումների վերաբերյալ հաղորդումները քննելիս պետք է ղեկավարվել նաև ՄԱԿ-ի այնպիսի մասնագիտացված կառույցների կողմից մշակված մի շարք սկզբունքներով, ինչպիսիք են՝ Խոշտանգումների դեմ հանձնաժողովը և Խոշտանգումների և այլ դատան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը:

րաբերմունքի դեպքերի մասին բողոքների և հաղորդումների անհապաղ և արդյունավետ քննությունն ապահովելու պարտավորություն:

Այսպես, ՄԻԵԴ-ը ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի կապակցությամբ բազմիցս արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն ակտիվ միջոցառումներ անձանց կողմից խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին ներկայացված հաղորդումների քննության ուղղությամբ: Մասնավորապես, ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի շրջանակներում նախատեսված արգելքն անդամ պետություններից պահանջում է, որպեսզի վերջիններս արդյունավետ հետաքննություններ անցկացնեն այն դեպքերում, երբ անձը պնդում է, որ իր նկատմամբ անմարդկային վերաբերմունք են դրսևորել համապատասխան պաշտոնատար անձինք: Այդ հետաքննությունը (ինչպես որ կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի խախտման դեպքում) պետք է կարողանա հանգեցնել մեղավորների բացահայտմանն ու պատժմանը:

Հիշյալ դիրքորոշումները համադրելով գործող քրեադատավարական իրավակարգավորումների հետ՝ անհրաժեշտ է նշել, որ այն դեպքում, երբ անձի կողմից ներկայացվում է համապատասխան բողոք կամ դիմում, որը կարող է վկայել ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով ամրագրված պահանջների խախտման մասին, ապա դրա կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցի լուծման համար նյութերի նախապատրաստումը (քրեական գործի հարուցումը) իրավակիրառ պրակտիկայում պետք է ողջամտորեն կրի իմպերատիվ բնույթ:

Պետք է նշել, որ Խոշտանգումների դեմ կոնվենցիայով ամրագրված է պետության պարտավորությունն, ըստ որի՝ հետաքննության իրականացումը պետք է պայմանավորված չլինի բացառապես տուժողի բողոքով: Մասնավորապես, Կոնվենցիայի 12-րդ հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, որ խոշտանգումը կիրառվել է իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում»:

Խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների քննության՝ միջազ-

գային իրավական ակտերում ամրագրված հիմնական սկզբունքները.

Միջազգային իրավական ակտերի համաձայն՝ քննություն իրակա-նացնելու պարտադիր հիմքերը երկուսն են՝ խոշտանգման վերաբերյալ հաղորդման ներկայացումը և խոշտանգման հատկանիշների հայտնա-բերումը պաշտոնատար անձանց կողմից:

Հաղորդում /Բողոք/ ներկայացնելու իրավունքը.

Հաղորդում ներկայացնելու իրավունք պետք է ունենա ցանկացած անձ, ով գտնում է, որ տուժել է խոշտանգումից:

Համաձայն խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագրի 8-րդ հոդվածի՝ ցանկացած անձ, ով պնդում է, որ պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրամամբ են-թարկվել է խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ արժա-նապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, պետք է ունենա համապատասխան պետության իրավասու մարմիններին գան-գատ ներկայացնելու և գործի անաչառ քննության իրավունք:

Բողոք ներկայացնելու իրավունքը կախված չէ անձի կարգավիճա-կից, նրա դեմ ներկայացված մեղադրանքներից և այլ հանգամանքնե-րից: Ընդ որում, միջազգային իրավական ակտերը հատուկ ընդգծել են նաև ձերբակալված և կալանավորված անձանց կողմից խոշտանգման փաստերով հաղորդում ներկայացնելու իրավունքը:

Մասնավորապես, որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի 33-րդ սկզբունքի 1-ին կետի համաձայն՝ *ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը կամ նրա դատապաշտպանն իրավունք ունեն ձերբակալման կամ կա-լանավայրի կառավարման համար պատասխանատու մարմին և ավե-լի բարձր արյաններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գանգապները քննարկելու կամ պաշտպանության միջոցներ տրամադրելու լիազորված համապատասխան մարմիններ ուղարկել խնդրագիր կամ գանգապ տրվյալ անձի նկատմամբ վարվեցողության վերաբերյալ, մասնավորա-պես՝ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող այլ վարվելաձևի դեպքում:*

խոշտանգման փաստով գանգատ /հաղորդում/ ներկայացնելու իրա-

վունքը չի պատկանում միայն խոշտանգման գոհին, նրա փաստաբանին կամ նրա օրինական ներկայացուցչին: Մասնավորապես, վերոգրյալ սկզբունքի 2-րդ կետի համաձայն՝ *այն դեպքերում, երբ ո՛չ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձը, ո՛չ նրա դատապաշտպանը հնարավորություն չունեն իրականացնել նրա իրավունքները 1-ին կեփին համապատասխան, նման իրավունք կարող է իրականացնել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի ընտանիքի անդամը կամ որևէ այլ անձ, որն իրազեկ է այդ գործին:*

Վարոյթն իրականացնող մարմինները չպետք է ձևական մոտեցում ցուցաբերեն խոշտանգման վերաբերյալ ներկայացված հաղորդումների առնչությամբ: Նրանք պետք է հավասարապես արձագանքեն թե՛ այն հաղորդումներին, որոնք ներկայացվել են օրենքով սահմանված կարգով գրավոր ձևի պահպանմամբ, թե՛ այն հաղորդումներին, որոնք չեն ներկայացվել ընթացակարգային ձևական կանոնների պահպանմամբ, ինչպես նաև բանավոր ցանկացած այլ եղանակով ներկայացված, այդ թվում՝ հստակ չձևակերպված կամահայտնությամբ և ոչ իրավասու մարմնին ներկայացված հաղորդումներին:

ՄԻԵԴ-ի՝ Վեզնեդարօղլուն ընդդեմ Թուրքիայի գործով հայցվորը ձերբակալվել էր քրդական աշխատավորական կուսակցության ապօրինի կազմակերպության անդամ լինելու կասկածանքով: Այս կինը պնդում էր, որ 11-օրյա կալանքի ընթացքում իրեն խոշտանգել էին սեռական օրգանների և բերանի շրջանում էլեկտրականության շոկերով և սպառնացել, որ կբռնաբարեն ու կսպանեն: Նա դատարանի առջև ներկայանալուն պես բողոքներ էր ներկայացրել, որից հետո անընդհատ շարունակել էր բողոքել՝ ընդհուպ մինչև իր դատը: Նրա բողոքների կապակցությամբ ոչինչ չէր արվել: Նրան գննել էին բժիշկները, ովքեր այտուցներ էին հայտնաբերել նրա ազդրին և ոտքի վերևի մասում: Ներկայացված ապացույցների հիման վրա Դատարանն անկարող եղավ պարզել, թե արդյոք հայցվորն իսկապես ենթարկվել էր խոշտանգումների: Դատարանը նշեց, որ նրա բողոքի հիմնավորվածությունը պարզելու դժվարության պատճառն այն էր, որ իշխանությունները չէին հետաքննել նրա բողոքները: Խոշտանգումների մասին հայցվորի պնդումները՝ գործի բժշկական նյութերի հետ մեկտեղ, պետք է որ բավարար լինեին՝ զգոնացնելու

դատախազին բողոքի էությունը հետաքննելու անհրաժեշտության առումով, հատկապես հաշվի առնելով այն, որ նա 11 օր պահվել էր կալանքի տակ: Հետևաբար, հայցվորը փաստարկվող հայց ունեւր այն մասին, որ իրեն խոշտանգել էին, որը պետական իշխանությունները պարտավոր էին հետաքննել՝ համաձայն ՄԻԵԿ-ի 1-ին և 3-րդ հոդվածների³⁷ :

Խոշտանգման հաղորդման հիման վրա վարույթ սկսելու համար պարտադիր չի համարվում դիմողի կողմից ոչ միայն սահմանված կարգով հաղորդման ներկայացումը, այլև օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահպանումը կամ էլ քրեական գործին ընթացք տալու վերաբերյալ հստակ կամահայտնության դրսևորումը³⁸ :

Խոշտանգման վերաբերյալ հաղորդման հիմնավորվածությունը

Ինչպես արդեն նշվել է, Կոնվենցիան խոշտանգումների դեպքերի արդյունավետ բացահայտման և խոշտանգումների զոհերի պաշտպանության հարցում հանրային հետապնդման կարգով հետաքննություն սկսելու անհրաժեշտ պայման է համարում «բավարար հիմքերի» առկայությունը:

Նշված հասկացությունն իր առավել ամբողջական դրսևորումն է ստացել ՄԻԵԴ՝ *Ասենուձն ընդդեմ Բուլղարիայի գործով*:

Մասնավորապես, նշված գործով տուժողը մի 14-ամյա տղա էր: Նա և նրա ծնողները պնդում էին, թե նրան ոստիկանները ձերբակալել էին և այդ ընթացքում ծեծել, և որ նրան կալանքի տակ էին պահել և 2 ժամ անց ազատ արձակել: Հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում տղային զննել էր բժիշկը, որն այտուցներ և քերծվածքներ էր նկատել: Բժիշկը եզրակացրել էր, որ այդ վնասվածքները կարող էին պատճառված լինել տուժողի կողմից նկարագրված եղանակով: Դատարանը եզրակացրեց, որ բժշկական ապացույցները, տուժողի ցուցմունքը, նրան ոստիկանության բաժնում երկու ժամով կալանքի տակ պահելու փաստը և որևէ վկաների ցուցմունքների բացակայությունն այն մասին, որ հայցվորը ծեծվել է սեփական հոր կողմից (ինչպես պնդում էր պետությունը) այնպիսի ծանրությամբ, որ ստանար արձանագրված կապտուկներ-

37 Տե՛ս, *Sevtaş Veznedaroglu v. Turkey* (Application no. 32357/96), 11 April 2000:

38 Տե՛ս, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովի եզրակացություն՝ Բուարդայիսի Լտաիֆի բողոքի հիման վրա. №189/2001: Թունիս, CAT/C/31/D189/2001/, պ. 10.5-10.7:

րը, միասին վերցրած առաջացնում էին ողջամիտ կասկած այն մասին, որ այդ վսասվածքները կարող էին պատճառված լինել ոստիկանության կողմից: Դատարանն այս դեպքում ողջամիտ կասկածը դիտարկեց որպես «փաստարկվող գործի» համարժեք և նշեց, որ այն դեպքերում, երբ անհատը փաստարկվող հայց է ներկայացնում այն մասին, որ իր նկատմամբ ապօրինաբար և 3-րդ հոդվածին հակասող կերպով դաժանորեն է վերաբերվել ոստիկանությունը կամ պետության որևէ այլ գործակալ, այդ դրույթը՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ պետությունների ընդհանուր պարտավորության հետ համատեղ («իր ընդդատության տակ գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովել Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը») ընթերցվելու դեպքում անուղղակիորեն պահանջում է, որպեսզի արդյունավետ պաշտոնական հետաքննություն լինի³⁹ :

Բողոքի հիմնավորվածության չափանիշները գնահատելիս պետք է նշել, որ որոշ դեպքերում ՄԻԵԴ-ը դրա բավարար հիմք է համարել տուժողի մարմնի վրա մարմնական վսասվածքների առկայությունը⁴⁰: Մինչդեռ, հաշվի առնելով խոշտանգման արդյունքում պատճառված վսասվածքների բնույթը, միշտ չէ, որ դրանք պահպանված են լինում: Նման դեպքերում, մասնավորապես, որպես բողոքի հիմնավոր լինելը գնահատող չափանիշ՝ կարող է հաշվի առնվել տուժողի կողմից դեպքերը մանրակրկիտ և ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնելը⁴¹, նույնաբովանդակ հիմքերով նաև այլ անձանց կողմից ներկայացված բողոքների առկայությունը⁴², առաջադրված մեղադրանքի լրջությունը⁴³:

Ինչպես նշվեց, խոշտանգման գործերով վարույթ սկսելու պարտադիր հիմք է հանդիսանում նաև պետական իրավասու մարմնի տրամադ-

39 Տե՛ս, Assenov and others v. Bulgaria (Application no. 90/1997/874/1086), 28 October 1998, պ. 101:

40 Տե՛ս, օրինակ, Kmetty v. Hungary (Application no. 57967/00), 16 December 2003, պ. 37, Toteva v. Bulgaria (Application no. 42027/98), 19 May 2004, պ. 61, Krastanov v. Bulgaria (Application no. 50222/99), 30 September 2004, պ. 58:

41 Տե՛ս, խոշտանգումների դեմ հանձնաժողովի՝ Էնկարնայոն Բլանկո Աբատի բողոքի հիման վրա տրված եզրակացություն (հաղորդում № 59/1996: Խսպանիա, CAT/C/20/D/59/1996), պ. 8.2 – 8.8:

42 Տե՛ս, Labita v. Italy (Application no. 26772/95), 6 April 2000, պ. 130:

43 Տե՛ս, Aydin v. Turkey (57/1996/676/866), 25 September 1997, պ. 105:

րության տակ հայտնված ցանկացած տեղեկատվություն, որը կարող է հնարավոր խոշտանգման մասին խոսելու առիթ հանդիսանալ:

Մասնավորապես, Ստամբուլյան արձանագրության 1-ին հավելվածում ամրագրված է. «(...)Անգամ ուղղակիորեն արտահայտված բողոքի բացակայության դեպքում, քննություն պետք է իրականացվի, եթե կան խոշտանգման կամ վարչական վերաբերմունքի հավանական դրսևորումների այլ նշաններ (...)»⁴⁴: Ընդ որում, հարկ է նշել, որ եթե անգամ խոշտանգման վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է պետական պաշտոնատար անձը, ով համապատասխան լիազորություններ չունի, ապա վերջինս պարտավորություն է կրում տեղեկատվությունը փոխանցել քննություն իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց⁴⁵: Այսինքն, նման պարագայում ևս պետությունը չի ազատվում խոշտանգման փաստի հիման վրա արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությունից:

խոշտանգման վերաբերյալ գործերի քննության արդյունավետությունը

Երբ անհատը ներկայացնում է փաստարկված պահանջ առ այն, որ ոստիկանությունը կամ պետական այլ մարմինները վատ վերաբերմունք են ցուցաբերել իր նկատմամբ՝ խախտելով 3-րդ հոդվածը, ապա այդ դրույթով՝ զուգակցված Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պետության ընդհանուր պարտավորության մասին դրույթի հետ, այն է՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայում (...)», ինքնին ենթադրվում է, որ պետք է իրականացվի արդյունավետ պաշտոնական քննություն⁴⁶:

Վատ վերաբերմունքի մասին արժանահավատ հայտարարությունների վերաբերյալ քննությունը պետք է բազմակողմանի լինի: Դա նշանակում է, որ իշխանությունները միշտ պետք է ձգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել և չպետք է անեն հապճեպ կամ անհիմն եզրակացություններ՝

44 Նմանատիպ դիրքորոշման համար տե՛ս նաև ՄԻԵԴ՝ Բաթին ընդդեմ Թուրքիայի գործով կայացված վճիռը. Bati and others v. Turkey (Applications no. 33097/96 and 57834/00), 3 June 2004, պ. 133:

45 Տե՛ս, Aktas v. Turkey (Application no. 24351/94), 24 April 2003. Պ. 303:

46 Տե՛ս, վերևում՝ Assenov and others v. Bulgaria, պ 102, և , Labita v. Italy, պ. 131:

իրենց քննությունը փակելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ միջոցները միջադեպի հետ կապված ապացույցներ ձեռք բերելու համար, որը, *inter alia*, ներառում է, վկաների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննությունը և այլն: Հետաքննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պատճառման մեխանիզմի կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնության հաստատումը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել⁴⁷:

Հարկ է նշել նաև, որ, Ստամբուլյան արձանագրությամբ հաստատվել է, որ խոշտանգումների դեպքերի ցանկացած արդյունավետ քննության հիմնարար սկզբունքներն են.

- *մասնագիտական պատրաստվածությունը,*
- *անկողմնակալությունը,*
- *անկախությունը,*
- *օպերատիվությունը և*
- *բազմակողմանիությունը:*

Քննության ընդհանուր նպատակն է բացահայտել խոշտանգման ենթադրյալ դեպքերի փաստերը՝ նպատակ ունենալով պարզել դեպքերի համար պատասխանատու անձանց ինքնությունը և նպաստել նրանց նկատմամբ հետապնդում իրականացնելուն կամ այդ փաստերն օգտագործել տուժողների կրած վնասները փոխհատուցելու համար նախատեսված այլ գործողությունների շրջանակներում:

Այդ նպատակին հասնելու համար քննություն իրականացնողներն առնվազն պետք է փորձեն հայտարարություններ վերցնել խոշտանգման ենթադրյալ դեպքի զոհերից, ձեռք բերել և պահպանել ապացույցներ, այդ թվում՝ բժշկական, որոնք վերաբերում են ենթադրյալ խոշտանգմանը և կարող են օգտակար լինել դեպքի համար պատասխանատվություն կրողների նկատմամբ ցանկացած հավանական հետապնդման համար, պարզել հնարավոր վկաների ինքնությունը և նրանցից ենթադրյալ խոշտանգման մասին հայտարարություններ վերցնել, ինչպես նաև որոշել՝ ինչպես, երբ և որտեղ են տեղի ունեցել խոշտանգման ենթադրյալ դեպքեր:

47 *Sէն, Mikheyev v. Russia*, (Application no. 77617/01), 26 January 2006 պ. 108, և *Virabyan v. Armenia*, (Application no. 40094/05), 2 October 2012, պ. 162:

քերը, ինչպես նաև ցանկացած վարվելակերպ կամ գործելակերպ, որը կարող էր հանգեցնել խոշտանգման:

Պետությունները պետք է ապահովեն խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի մասին բողոքների և հաղորդումների անհապաղ և արդյունավետ քննությունը: Ուղղակիորեն արտահայտված բողոքի բացակայության դեպքում անգամ քննություն պետք է իրականացվի, եթե կան խոշտանգման կամ վատ վերաբերմունքի հավանական դրսևորման այլ նշաններ (կետեր 73, 76, 78 գլուխ III):

Վերլուծելով միջազգային իրավակիրառ պրակտիկայում ամրագրված վերոգրյալ մոտեցումները և դրանք համադրելով ՀՀ քրեադատավարական կարգավորումների հետ՝ հարկ է նշել, որ խոշտանգման վերաբերյալ հաղորդումների քննությունը ՀՀ օրենսդրությամբ և իրավակիրառ պրակտիկայում ևս պետք է ունենա իր առանձնահատկությունները՝ պայմանավորված նշված պարտավորություններն ապահովելու անհրաժեշտությամբ: Վերոգրյալի համատեքստում տեսական և գործնական հետաքրքրություն կարող է ներկայացնել այն հարցը, թե միջազգային իրավական համապարտադիր կանոնների համաձայն ինչպես պետք է վարվեն ՀՀ իրավապահ մարմինները՝ խոշտանգման վերաբերյալ հաղորդում ստանալիս:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի⁴⁸ համաձայն՝ քրեական վարույթի շարժը սկզբնավորվում է հանցագործության մասին հաղորդման ներկայացմամբ, որը պետք է պարունակի քրեական գործ հարուցելու օրինական առիթի և բավարար հիմքերի ամբողջականություն:

Քրեական գործի հարուցման օրինական առիթը ՀՀ ՔԴՕ նախատեսված այն աղբյուրն է, որտեղից քրեական հետապնդման մարմինները տեղեկատվություն են ստանում ենթադրյալ հանցանքների վերաբերյալ: Սակայն, ցանկացած տեղեկատվություն չէ, որ կարող է հանդիսանալ քրեական գործի հարուցման օրինական առիթ՝ քրեադատավարական իրավունքի ճյուղի իմաստով:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ՀՀ ՔԴՕ նախատեսված՝ քրեական գործի հարուցման օրինական առիթ հանդիսացող տեղեկատվությունը

48 Այսուհետ՝ ՔԴՕ:

պետք է լինի հիմնավորված, փաստարկված, հիմնված արժանահավատ տվյալների վրա, ինչպես նաև ենթադրյալ հանցանքի կատարման մասին ողջամիտ կասկած առաջացնի իրավագիտակից անկողմնակալ դիտորդի մոտ:

Է. Կարապետյանի⁴⁹ և Ռ. Նիսյանի⁵⁰ վերաբերյալ գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտվել են դիրքորոշումներ՝ անձի կողմից ներկայացված հաղորդումն անհետևանք թողնելու դատավարական կառուցակարգերի շուրջ, որոնք մեր համոզմամբ, կիրառելի պետք է լինեն միայն այն հաղորդումների նկատմամբ, որոնք ակնհայտ վերացական բնույթի են և դրանց կապակցությամբ հանրային ռեսուրսների հաշվին նյութեր նախապատրաստելն առարկայազուրկ է, ուստի, այդ դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը չի կարող կաշկանդված լինել քրեադատավարական բնույթի որոշում կայացնելու ՀՀ քրեադատավարական օրենքով ամրագրված պահանջով:

Մինչդեռ, պետք է նշել, որ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն առավել մեծ ուշադրությամբ վերաբերվելու այնպիսի հաղորդումներին, որոնք կարող են պարունակել հնարավոր խոշտանգման կամ վատ վերաբերմունքի մասին տեղեկատվություն, անգամ այն պարագայում, երբ դրանք կարող են թվալ ընդհանրական բնույթի:

ՄԻԵԴ-ի կողմից սահմանված բազմակողմանիության պահանջը ենթադրում է, որ անկախ ներկայացված հաղորդման հիմնավորվածության մակարդակից՝ վարույթն իրականացնող մարմինը պետք է օրենքով իրեն վերապահված հնարավոր բոլոր քննչական և այլ դատավարական գործողությունները կատարի՝ պարզելու համար ներկայացված հաղորդման առիթի օրինականությունը և հիմքերի առկայությունը և չի կարող զուտ հաղորդման հիմնավորվածության բացակայության պատճառաբանությամբ այն թողնել առանց քննության:

Նման գործողությունները թվարկված են ՀՀ ՔԴՕ 180-րդ հոդվածի 2-րդ մասում: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 180-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկ-

49 Տե՛ս, Էմմա Կարապետյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշում:

50 Տե՛ս, Ռուզաննա Նիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 գործով որոշում:

ման և լուծման համար սահմանված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

Այսինքն, պատշաճ՝ անհապաղ և արդյունավետ քննություն՝ խոշտանգման, վատ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկությունների մասով կարող է ապահովվել բացառապես հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու ուղղված գործողությունների կատարմամբ, ինչն էլ ինքնին անհրաժեշտ իրավական հիմք կարող է ապահովել համապատասխան որոշում կայացնելու հիմքերի բավարարության նվազագույն շեմի հաղթահարմամբ ՀՀ ՔԴՕ 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկի (քրեական գործ հարուցելու մասին, քրեական գործ հարուցելը մերժելու մասին, հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին) կայացման համար:

Այլ կերպ ասած՝ խոշտանգման մասին հաղորդումը կարող է լինել վերացական կամ ընդհանուր բնույթի, կարող է չբովանդակել տվյալներ և մանրամասներ ենթադրյալ հանցագործության մասին, սակայն այն պետք է հիմք հանդիսանա վարույթն իրականացնող մարմնի կողմից անհապաղ ՀՀ ՔԴՕ 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու ուղղված դատավարական գործողություններ կատարելու և արդյունքում ՀՀ ՔԴՕ նույն հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու համար:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարարությունը ստուգելու համար սահմանել է ընդհանուր՝ տասնօրյա ժամկետ (քրեական գործի հարուցման կամ նյութերի նախապատրաստման փուլ)՝ սահմանելով նաև նշված ժամկետի ընթացքում կատարվող դատավարական գործողությունների ծավալը:

Նշված իրավակարգավորումն օբյեկտիվորեն պայմանավորված է վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործ հարուցելու

կամ դրա հարուցումը մերժելու վերաբերյալ ողջամիտ եզրահանգման գալու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմինը քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի առկայությունը կարող է պարզել միայն դրանց վերաբերյալ որոշակիորեն հիմնավորված ենթադրություն կատարելու արդյունքում: Միայն նման պայմաններում վարույթն իրականացնող մարմինը կարող է ողջամիտ եզրահանգման գալ՝ քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու վերաբերյալ:

Քրեական գործի հարուցման (նյութերի նախապատրաստման) փուլի նպատակը հենց վերոգրյալ եզրահանգմանը գալու համար բավարար փաստարկներ և տեղեկություններ ունենալն է: Ընդ որում, հաշվի առնելով նաև խոշտանգման վերաբերյալ դիմումների հիմնավորվածությունը գնահատելիս միջազգային իրավական ակտերով և իրավակիրառ պրակտիկայում ամրագրված «բավարար հիմնավորվածության» մակարդակը, կարելի է գալ այն եզրահանգման, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից խոշտանգման մասին վկայող ցանկացած տեղեկություն պետք է հիմք հանդիսանա բողոքի հիմնավորվածությունը գնահատելուն ուղղված միջոցների անհապաղ ձեռնարկման համար: Այդ միջոցներն, ըստ էության ՀՀ ՔԴՕ 180-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված քննչական և այլ դատավարական գործողություններն են:

Այլ կերպ ասած՝ եթե ՀՀ քր. օր.-ով նախատեսված այլ հանցակազմերի դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործով վարույթ սկսելու (նյութերի նախապատրաստման փուլը սկսելու) համար անհրաժեշտ է որոշակի հիմնավորվածության մակարդակ ունեցող հաղորդում ներկայացնել, ապա խոշտանգման դեպքերում դա պետք է բացառվի, և անգամ նվազագույն հիմնավորվածություն ունեցող հաղորդման ներկայացված լինելն արդեն իսկ անհրաժեշտ և բավարար նախապայման է դրա հիմնավորվածությունը ստուգելուն ուղղված քրեադատավարական գործողություններ կատարելու և քրեական գործի հարուցման կամ դրա մերժման հիմքերի առկայությունը պարզելու համար:

Այսինքն, քրեական գործի հարուցման փուլը նման գործերով պետք է նվազագույն տևողություն ունենա, իսկ քրեական գործի հարուցման հա-

մար նվազագույն հիմնավորվածություն է անհրաժեշտ:

Ընդ որում, խոշտանգումների կապակցությամբ ներկայացված հաղորդումների հիման վրա հարուցված քրեական գործերի կարճումը, կասեցումը, քրեական հետապնդման չիրականացումը պետք է դիտարկվի որպես բացառիկ միջոց:

Գործերի քննությունը պետք է արդյունավետ լինի պրակտիկ տեսանկյունից և չպետք է անհարկի ձգձգվի պետության իշխանությունների գործողությունների կամ անգործության արդյունքում:⁵¹

Խոշտանգման վերաբերյալ հաղորդումների արդյունավետ քննությունը անմիջականորեն պայմանավորված է նաև քրեական գործի սկզբնական փուլում կատարվող դատավարական գործողությունների արագությամբ: Մասնավորապես, այն ենթադրում է.

1. *Քրեական գործի հարուցման կամ մերժման վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված միջոցների անհապաղ ձեռնարկում.* պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք չպետք է անհարկի ձգձգեն քրեական գործի հարուցման հարցի լուծումը և անմիջապես միջոցներ ձեռնարկեն ներկայացված բողոքի վերաբերյալ պաշտոնական որոշում կայացնելու ուղղությամբ:

ՀՀ օրենսդրության համատեքստում արագությունը ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի կողմից բողոքի հիմնավորվածությունը գնահատելուն ուղղված միջոցների անհապաղ ձեռնարկում: Մասնավորապես, խոշտանգման փաստի վերաբերյալ անգամ նվազագույն հիմնավորվածություն ունեցող հաղորդում ներկայացվելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է անմիջապես միջոցներ ձեռնարկի միջազգային իրավակարգավորումների համաձայն «բավարար հիմքերի» առկայությունը պարզելու և քրեական գործի հարուցման հնարավորությունը պարզելու համար: Այլ կերպ ասած, քրեական գործի հարուցման փուլը նման գործերով պետք է նվազագույն տևողություն ունենա, իսկ քրեական գործի հարուցման համար նվազագույն հիմնավորվածություն է անհրաժեշտ: ⁵²

Մասնավորապես, Ստամբուլյան արձանագրության 1-ին սկզբունքի

51 Sfin, Bati and others v. Turkey (Applications no. 33097/96 and 57834/00), 3 June 2004, պ. 133,134

52 Առավել մանրամասն արդեն խոսվել է:

համաձայն /78-րդ կետ/. «Պեղությունները պետք է ապահովեն խոշորանգաման կամ վարվերաբերմունքի դեպքերի մասին բողոքների և հաղորդումների անհապաղ և արդյունավետ քննությունը»:

Կամ, Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի 33-րդ սկզբունքի 4-րդ կետի համաձայն. «Յուրաքանչյուր խնդրագիր կամ գանգապ անհապաղ քննարկվում է, և պատասխանը տրվում է առանց չարդարացված ձգձգման»:

Նշվածի վերաբերյալ առկա են մոտեցումներ նաև ՄԻԵԴ վճիռներում⁵³ ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ հանձնաժողովի մի շարք եզրակացություններում⁵⁴:

2. Քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման արագություն.

Որպեսզի խոշտանգման վերաբերյալ գործերի քննությունը արագ տեղի ունենա, բավարար չէ միայն քրեական գործի արագ հարուցումը: Նման պարագայում վարույթն իրականացնող մարմնի կողմից քննության ընթացքը ևս պետք է կազմակերպվի բավարար չափով արագ՝ գործի արդյունավետ քննությունն ապահովելու և խոշտանգումից տուժածի իրավունքների և օրինական շահերի ոտնահարումներ թույլ չտալու համար:

Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոշտանգման վերաբերյալ գործերով առաջնային նշանակություն ունի տուժողի մարմնի վրա առկա վնասվածքների առկայությունը և դրանց բնույթը պարզաբանելը, վարույթն իրականացնող մարմնի կողմից անհապաղ պետք է ձեռնարկվեն միջոցառումներ՝ բժշկական փորձաքննություն նշանակելու ուղղությամբ:

Մասնավորապես, ՄԻԵԴ-ը Պոլոտրացկին ընդդեմ Ուկրաինայի գործով անբավարար էր համարել այն, որ բանտի բժշկի կողմից դիմողի բժշկական քննություն չէր իրականացվել մինչև 1998թ. հոկտեմբերի 28-ը (ի տարբերություն բանտի հոգեբույժի), 1998թ. սեպտեմբերի 4-ին

53 Տե՛ս, Abdulsamet Yaman v. Turkey (Application no. 32446/96), 2 November 2004. պ. 54:

54 Տե՛ս, հաղորդում N° 8/1991: Ավստրիա, CAT/C/11/D/8/1991), պ. 13.5, հաղորդում N° 59/1996: Իսպանիա, CAT/C/20/D/59/1996), պ. 8.2 – 8.8, (հաղորդում N° 171/2000: Սերբիա և Չերնոգորիա, CAT/C/34/D/171/2000), պ. 7.2:

դիմողի ծնողների կողմից մարզային դատախազին հղած նամակից գրեթե երկու ամիս անց, երբ ենթադրյալ վատ վերաբերմունքի հետքերը, հավանաբար, անհետացել էին⁵⁵:

Բացի բժշկական բնույթի ապացույցներ ստանալուց, վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է անհապաղ կատարվեն նաև դատավարական գործողություններ: Մասնավորապես, կարևոր նշանակություն ունեն տուժողի, մեղադրյալի (կասկածյալի) հարցաքննությունները, ճանաչման ներկայացնելը և այլն: Քննչական գործողություններն ուշացումով կատարելը ևս ՄԻԵԴ-ը համարել է 3-րդ հոդվածի խախտում:

Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ Լիվորնոյի դատախազի կողմից իրականացված քննությունը եղել է չափազանց դանդաղ. տուժողին հարցաքննելուց հետո անցել է տասնչորս ամիս, մինչ նրան կանչել են մեղադրյալին ճանաչման ներկայացնելուն: Բացի այդ, միակ գործողությունը, որ այդ ընթացքում կատարվել է, եղել է Պիանոզայում աշխատող պահակների լուսանկարների կրկնօրինակների ձեռքբերումը⁵⁶:

Այսպիսով, քրեական դատավարության սկզբնական փուլում խոշտանգումների վերաբերյալ հաղորդումներին ճիշտ գնահատական տալը հանդիսանում է կարևորագույն երաշխիք՝ քրեական դատավարության հետագա փուլերի արդյունավետության և խոշտանգումների վերաբերյալ գործերի արդյունավետ ու բազմակողմանի քննությունն ապահովելու համար:

2.2. ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՔՆՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ

Խոշտանգումների վերաբերյալ գործեր քննելիս առանձնակի նշանակություն ունի քննություն իրականացնող մարմինների լիակատար անկախությունը, անաչառությունը և օպերատիվությունը: Վերջիններս պատասխանատու են գործի բոլոր հանգամանքների բացահայտման

55 Տե՛ս, Poltoratskiy v. Ukraine (Application no. 38812/97), 29 April 2003, պ. 126:

56 Տե՛ս, Labita v. Italy (Application no. 26772/95), 6 April 2000, պ. 133:

համար և պարտավոր են երաշխավորել, որ քրեական գործի քննության ընթացքում ստացված ապացույցները ձեռք բերվեն պատշաճ կերպով և որ այդ ընթացքում մեղադրյալի (կասկածյալի) հիմնարար իրավունքները չտոնահարվեն:

Խոշտանգման վերաբերյալ հաղորդումների քննության բազմակողմանիության սկզբունքը ենթադրում է գործի համար նշանակություն ունեցող բոլոր ապացույցների ժամանակին հայտնաբերումն ու ամրագրումը: Ապացույցների հավաքմանն ուղղված գործողությունների անտեսումը, խոշտանգման վերաբերյալ հաղորդում ներկայացրած անձի պնդումները ստուգող քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելը ՄԻԵԴ-ը դիտարկել է որպես քննության բազմակողմանիության սկզբունքի խախտում⁵⁷:

Բացի այդ, առկա են մի շարք գործոններ, որոնք կարող են ազդել խոշտանգման հաղորդումների քննության արդյունավետության վրա: Նախևառաջ, կարող է առաջանալ նախնական քննություն իրականացնող և հսկողություն իրականացնող մարմինների շահերի բախում:

Բանն այն է, որ դատախազի կողմից քրեական գործի հարուցման, հետաքննության և նախաքննության ընթացքում խոշտանգման վերաբերյալ փաստերի վերհանումը կարող է կասկածի տակ դնել վերջինիս կողմից գործի քննության նկատմամբ արդյունավետ հսկողություն իրականացնելու հանգամանքը: Երկրորդը, կարող է մտավախություն առաջանալ, որ խոշտանգման փաստի հաստատումը կարող է հանգեցնել արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության, արդյունքում, այլ ապացույցների բացակայության դեպքում՝ նաև մեղադրյալի արդարացման, ինչը կարող է վկայել քննությունն իրականացնող մարմինների կողմից ոչ արդյունավետ քննություն իրականացնելու մասին: Եվ վերջապես, խոշտանգումների զոհերը հաճախ խուսափում են բողոք ներկայացնել իրավասու մարմիններին՝ հետագայում ճնշումների ենթարկվելու վախի, ինչպես նաև՝ հանցանքի բացահայտման նկատմամբ ունեցած թերահավատության պատճառով: Ավելին, անգամ ներկայացվելու պարագայում խոշտանգման դեպքի վերաբերյալ հաղորդումները տրվում են դեպքից բավական ժամանակ անց, և արդյունքում

57 Տե՛ս, Aydin v. Turkey (57/1996/676/866), 25 September 1997, պ. 106:

դժվարանում է ապացույցների ձեռքբերումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ խոշտանգման գործեր քննող պետական մարմինների պաշտոնատար անձանց՝ համապատասխան դատավարական գործողություններ կատարելիս անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և ունակությունների առկայությունը և օպերատիվությունը, հարկավոր են միջազգային իրավական ակտերով և ՄԻԵԴ-ի կողմից սահմանված խոշտանգման գործերի քննության արդյունավետությունն ապահովելու համար:

Ընդ որում, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով սահմանված արդյունավետության նվազագույն չափորոշիչները ներառում են այն պահանջները, որ քննությունը լինի անկախ, անաչառ ու հրապարակային, և որ իրավասու մարմինները գործեն բացառիկ ջանասիրությամբ և արագությամբ⁵⁸:

Վերոգրյալով պայմանավորված՝ այդպիսի հանցագործությունների քննությունը պետք է իրականացվի անկախ, անաչառ, համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող քննիչների կամ այդպիսի քննիչներից կազմված քննչական խմբի կողմից:

Որպես քննության անաչառության նախապայման՝ ՄԻԵԴ-ի կողմից առանձնակի արժևորվում է քննություն իրականացնող մարմնի իրական անկախությունը, որը հանդես է գալիս որպես յուրօրինակ ցուցիչ՝ գնահատելու վարույթն իրականացնող մարմնի գործողությունների արժանահավատությունը: Այլ կերպ ասած՝ քննությունն իրականացնող մարմինը պետք է լինի անկախ, զերծ ամեն տեսակ գերատեսչական միջամտությունից: Նշված հանգամանքն էապես բարձրացնում է հանրային վստահությունը քննության իրականացման անկողմնակալության, օբյեկտիվության շուրջ՝ յուրօրինակ սկզբունք-երաշխիք դառնալով նաև մյուս պահանջների կենսագործման համար: Այս պահանջի շրջանակներում տեղին կլիներ հիշատակել գործերից մեկով ՄԻԵԴ-ի դիրքորոշումը՝ որի համաձայն՝ (...) ոստիկանության դեմ բողոքելու մեխանիզմը պետք է վայելի հանրության վստահությունը, այն ոչ միայն պարզապես պետք է լինի անկախ, այլ այն պետք է անկախ լինի ոստիկանությունից:

ՄԻԵԴ-ը նշել է նաև, որ գործի հանգամանքների սկզբնական ստու-

58 Տե՛ս, *Menesheva v. Russia* (Application no. 59261/00), 9 March 2006, պ. 64:

գումը կատարվել է այն հաստատության կողմից (Ներքին գործերի նախարարություն), որտեղ աշխատել է վատ վերաբերմունքի մեջ կասկածվողների մեծ մասը (ոստիկանությունը Նախարարության կազմում էր)⁵⁹:

Քննության անկախության պահանջը ենթադրում է, որ խոշտանգման գործերի վարույթն իրականացնող մարմինները պետք է ունենան համապատասխան լիազորություններ և ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են քննության արագ և անխոչընդոտ իրականացման, անհրաժեշտ տեղեկատվության ժամանակին ստացման համար, անգամ եթե նման տեղեկատվություն անհրաժեշտ է ստանալ պետական մարմիններից ու պաշտոնատար անձանցից:

Խոսելով այն մասին, թե որ մարմինների կողմից է իրականացվում խոշտանգման վերաբերյալ գործերի քննությունը, պետք է նշել, որ հետաքննության մարմինների ենթակայության հարցը կարգավորված է ՀՀ ՔԴՕ 56-րդ հոդվածով, որտեղ հստակ նշված է, թե հետաքննության որ մարմինն ինչ բնույթի հանցագործություններով է լիազորված հետաքննություն անցկացնել: Իսկ նախաքննության մարմինների ենթակայության հարցը կարգավորված է ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածով:

Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունը ՀՀ քր. օր.-ի 104-164, 166-187, 190.1, 190.2, 191, 192, 195-201, 204, 212-214, 218, 222, 223, 225, 225.1, 227-232, 235-249 (բացառությամբ 235.1 հոդվածի), 251-298 (բացառությամբ 267.1 հոդվածի), 300, 300.1, 300.2, 301, 301.1, 308-328 (բացառությամբ 310.1 հոդվածի), 331-332.5, 336, 341, 341.1, 341.2, 343-345¹, 347-355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները⁶⁰:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության

59 Տե՛ս, ՀՀ հատուկ քննչական ծառայություն. Խոշտանգման գործերով քննության կազմակերպման և իրականացման ուղեցույց. Գիտ. խմբագիր՝ Վ. Շահինյան. Եր.: Տիգրան Մեծ, 2014, էջ 31:

60 Որպես կանոն, ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դեպքերով հարուցված գործերի քննություն կարող են իրականացնել ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության քննիչները, քանի որ խոշտանգում իրականացնելու հավանականություն ունեցող այլ սուբյեկտների վերաբերյալ քրեական

մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ՀՀ քր. օր.-ի 149, 150, 154.1, 154.2, 154.9, 314.2, 314.3, 310.1 հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:

Նույն հոդվածի 6.1-րդ մասի համաձայն՝ նախաքննությունը հատուկ քննչական ծառայության ծառայողների՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը: Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի վրա, որոնցից 6-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1-ին մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները:

Քննչական ենթակայությունը քրեական գործի՝ օրենքով նախատեսված իրավական այն հատկանիշների համակցությունն է, որը հնարավորություն է տալիս պարզել, թե քրեական հետապնդման որ մարմինը պետք է իրականացնի տվյալ քրեական գործի նախնական քննությունը⁶¹:

ՀՀ ՔԴՕ՝ քննչական ենթակայությունը կարգավորող դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշակի առանձնահատկություններով

գործերի քննությունը վերապահված է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:
61 Տե՛ս, ՀՀ քրեական դատավարություն. ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 66:

պայմանավորված՝ խոշտանգման վերաբերյալ հաղորդումները կարող են քննվել ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ինչպես նաև ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից:

Մինչդեռ, պրակտիկայում կարող են որոշ խնդիրներ առաջանալ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե, օրինակ, որ մարմնի կողմից պետք է քննվի խոշտանգման վերաբերյալ հաղորդումն այն դեպքում, երբ այն ենթադրաբար կատարվել է վերոգրյալ բոլոր մարմինների քննիչների մասնակցությամբ: Կարող է հարց առաջանալ, թե նման պայմաններում ինչպես պետք է ապահովել քննություն իրականացնող մարմնի՝ լիակատար անկախությունը, անաչառությունը և օբյեկտիվությունը:

Նախևառաջ պետք է նշել, որ ի կատարումն ՄԻԵԴ-ի պահանջների՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի հանձնարարականի համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից քննչական խումբ կազմելու դեպքում այդ խմբի կազմում չեն ներգրավվելու ՀՀ այն իրավապահ մարմինների քննիչները, որտեղ ծառայել կամ ծառայում է ենթադրյալ խոշտանգում կատարած անձը⁶²:

Բացի այդ, կարգավորումներ են նախատեսված նաև Ստամբուլյան արձանագրության համապատասխան դրույթներում: Մասնավորապես, այն դեպքերում, երբ կասկածներ կան, որ խոշտանգմանը մասնակցել են պետական պաշտոնյաներ, ներառյալ, երբ հավանականություն կա, որ խոշտանգում իրականացնելու հրամանը տրվել է նախարարների, նախարարների օգնականների, նախարարների գիտությամբ գործող պաշտոնատար անձանց, պետական նախարարությունների բարձրաստիճան ծառայողների, բարձրաստիճան զորապետերի կողմից, կամ այդ անձանց կողմից խոշտանգումը հանդուրժելու դեպքում, գործի օբյեկտիվ և անկողմնակալ քննության իրականացումը հնարավոր չի լինի, եթե չստեղծվի քննչական հատուկ հանձնաժողով: Քննչական հանձնաժողովի անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև այն դեպքում, եթե կասկածի տակ է դրվում քննություն իրականացնող անձանց փորձառությունն ու անկողմնակալությունը:

62 Տես, ՀՀ հատուկ քննչական ծառայություն. խոշտանգման գործերով քննության կազմակերպման և իրականացման ուղեցույց. Գիտ. խմբագիր՝ Վ. Շահինյան. Եր.: Տիգրան Մեծ, 2014, էջ 31:

Այն գործոնները, որոնք հիմք են տալիս կարծելու, որ պետությունը մասնակցել է խոշտանգմանը կամ գոյություն ունեցող հատուկ հանգամանքները, որոնք կարող են հատուկ անկողմնակալ քննություն իրականացնելու համար անհրաժեշտ մեխանիզմների ստեղծման պատճառ հանդիսանալ, ներառում են՝

- ա) արդյո՞ք զոհին ոստիկանության բաժնում կամ արգելանքի տակ պահելու վայրում վերջին անգամ տեսել են առանց վնասվածքների,
- բ) արդյո՞ք գործելակերպը ակնհայտորեն կապված է պետության կողմից հովանավորվող խոշտանգման հետ,
- գ) արդյո՞ք պետությունը կամ պետության հետ առնչություն ունեցողները փորձել են խոչընդոտել կամ ձգձգել խոշտանգման դեպքի քննությունը,
- դ) արդյո՞ք հանրության շահերը կարող են պահպանվել անկախ քննության շրջանակներում,
- ե) արդյո՞ք ընդհանուր քննչական մարմինների կողմից քննության իրականացումը կասկածի տակ է դրվում փորձառության պակասի կամ անաչառության բացակայության կամ այլ պատճառներով, այդ թվում՝ գործի կարևորության, չարաշահման դեպքերի ակնհայտ գոյության, համապատասխան անձի կողմից բողոքների կամ վերը նշված անհամապատասխանությունների կամ այլ էական պատճառներով:

Քննչական անկախ հանձնաժողով ստեղծելու մասին պետության կողմից որոշում կայացվելու դեպքում պետք է հաշվի առնվեն մի շարք նկատառումներ: Առաջինը՝ գործի քննության բոլոր փուլերում քննության սուբյեկտ հանդիսացող անձանց համար պետք է ապահովվեն միջազգային իրավունքով ամրագրված նվազագույն ընթացակարգային երաշխիքները: Երկրորդը՝ քննություն իրականացնող անձինք, պետք է ջգակցություն ստանան տեխնիկական և վարչական համապատասխան անձնակազմի կողմից, ինչպես նաև նրանց համար պետք է մատչելի լինի օբյեկտիվ, անաչառ իրավական խորհրդատվությունը, որպեսզի գործի քննության արդյունքում ապահովվեն քրեական վարույթի համար թույլատրելի ապացույցներ: Երրորդը՝ քննություն իրականացնող անձինք

պետք է լիարժեք կերպով օգտվեն պետության կողմից տրամադրված ռեսուրսներից և լիազորություններից: Եվ վերջապես, քննություն իրականացնող անձինք պետք է իրավունքի և բժշկության ոլորտի փորձագետների միջազգային ասոցիացիայից օգնություն ստանալու իրավունք ունենան:

Երկրի իրավական համակարգի բնույթից ելնելով՝ նախաքննությունը և հետաքննությունը կարող են իրականացնել դատախազները, հաշտարար դատավորները և դատավորները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները (ինչպիսիք են Օմբուդսմենը և մարդու իրավունքների հանձնաժողովները) կամ տեսչական կառույցները: Որոշ երկրներ Գլխավոր դատախազության կամ այլ կառույցի ներսում կարող են ստեղծել «խոշտանգումների հետաքննության բաժիններ»:

Նախաքննությունը կարող է նաև ընդունել ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների ներքին քննության ձև՝ հնարավոր կարգապահական պատժամիջոցներ կիրառելու կամ դատախազությանը գործը փոխանցելու նպատակով. որպես դատական քննություն կամ կորոնների կողմից իրականացվող քննություն՝ մահով ավարտված դեպքերում, բռնությունների որոշակի դեպքերում քննություն իրականացնող հատուկ դատական հանձնաժողով, բողոքների քննություն իրականացնող մարմին, որ անմիջականորեն պատասխանատու է ոստիկանության կողմից բռնությունների դեպքերի կամ ներքին քննությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: Այն դեպքերում, երբ հայտնաբերվում են հանցագործության *prima facie*՝ առաջին հայացքից ապացույցներ, դրան անպայման պետք է հետևի քրեական հետաքննություն:

Դատախազներն ու դատավորները, որոնք ներգրավված են հետաքննության իրականացման մեջ, պետք է հնարավորինս ապահովեն հետևյալ սկզբունքների պահպանումը.

- Հետաքննությունը պետք է իրականացվի իրավասու, որակավորում ունեցող և անաչառ փորձագետի կողմից, որն անկախ է կասկածվող իրավախախտներից և այն կառույցներից, որոնցում նրանք աշխատում են:
- Քննություն իրականացնողները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալու անհրաժեշտ բոլոր տեղեկություններին, բյու-

ջետային տեխնիկական միջոցներին՝ բողոքի բոլոր կետերի լիարժեք հետաքննություն իրականացնելու համար:

- Քննություն իրականացնողները պետք է ազատագրված վայրեր անսահմանափակ մուտքի, բոլոր փաստաթղթերին ծանոթանալու և բոլոր անձանց հետ հաղորդակցվելու հնարավորություն ունենան: Քննություն իրականացնող մարմինը պետք է վկաներին կանչելու, ապացույցներ պահանջելու և գործին առնչվող բոլոր հրամանների, հանձնարարությունների և նյութերի վրա կալանք դնելու իրավասություն ունենա: Բոլոր հետաքննությունների արդյունքները պետք է հրապարակվեն⁶³:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարծում ենք, որ պետք է ստեղծվի ad hoc քննիչի ինստիտուտ: Նշված քննիչները որևէ այլ քննչական մարմնից կախվածության մեջ չպետք է լինեն, և, հաշվի առնելով անկախ ու անաչառ մարմնի կողմից քննության իրականացումն ապահովելու պետության պարտավորությունը, նման գործերի քննությունը պետք է վերապահվի վերջինիս:

Նշված քննիչները պետք է ունենան բարձր որակավորում, հատուկ գիտելիքներ և անցած լինեն հատուկ մասնագիտացված պատրաստվածություն՝ հաշվի առնելով խոշտանգման քննության առանձնահատկությունները (պայմանավորված խոշտանգման սուբյեկտների մոտ պետական ծառայության ոլորտին առնչվող խորը գիտելիքների առկայությամբ և դրա հետևանքով օբյեկտիվ ճշմարտության բացահայտման բարդությամբ):

Նման քննիչների՝ համապատասխան դեպքերում քրեական գործերի քննությանը ներգրավելը կարող է կատարվել գլխավոր դատախազի որոշմամբ:

Ընդ որում, լիակատար անկախությունն ապահովելու համար պետք է բացառվի նաև վերադաս մարմինների կողմից այդ ընթացքում իր կողմից կատարված գործողությունների համար ցանկացած տեսակի, այդ թվում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

63 Տեն, Ֆոլի Բ. Պայքար խոշտանգումների դեմ. Ձեռնարկ դատավորների և դատախազների համար. թարգմանությունը՝ Լ. Պետրոսյան, էջեր 72-73:

Վերագրյալով պայմանավորված՝ խոշտանգման վերաբերյալ հաղորդումների արդյունավետ քննության համար անհրաժեշտ է՝

1. կատարելագործել խոշտանգման գործեր քննող պաշտոնատար անձանց մասնագիտական պատրաստվածությունը՝ հատուկ ուսումնական ձեռնարկներ մշակելու, աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացներ մշակելու ճանապարհներով,
2. ստեղծել հատուկ կառուցվածքային ստորաբաժանում, որի խնդիրը կլինի հենց խոշտանգման վերաբերյալ գործերի քննությունը⁶⁴,
3. այն դեպքերում, երբ հնարավոր չէ պետության կողմից ապահովել քննության անկախությունը, պետք է օրենսդրորեն նախատեսվեն երաշխիքներ՝ անկախ քննչական հանձնաժողով ստեղծելու համար:

64 Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում արդեն իսկ գործում է մասնագիտացված ստորաբաժանում՝ Խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության տեսքով, ինչն, անշուշտ, ողջունելի է, սակայն, ինչպես նշվել է, պայմանավորված սուբյեկտով, խոշտանգման դեպքերի վերաբերյալ քննություն կարող են իրականացնել նաև քննչական այլ մարմիններ:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻԵԴ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ՝ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Միջազգային փաստաթղթերի և պրակտիկայի ամփոփ ուսումնասիրությունից ակնհայտ է, որ որպեսզի արարքը լինի «խոշտանգում», պետք է գոյություն ունենան հետևյալ տարրերը.

- ֆիզիկական և/կամ հոգեկան ծանր ցավ կամ տառապանք,
- դիտավորություն,
- որոշակի նպատակ (խոստովանություն, տեղեկություններ ստանալը, ահաբեկելը, խտրականությունը...),
- պետության պատասխանատվություն:

Ինչպես արդեն նշվել է, ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի կիրառման ընթացքում առաջնահերթ խնդիրն է պարզել դաժանության նվազագույն շեմը, որի առնչությամբ ՄԻԵԿ-ը 1969թ.-ին Դանիան ընդդեմ Հունաստանի գործով և 1978թ.-ին Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով ոչ միայն կոնկրետ դեպքով նշել է այդ շեմը՝ սահմանելով, որ այդ նվազագույն շեմը հարաբերական է և որոշվում է կոնկրետ գործի հանգամանքներից, ներառյալ՝ վատ վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ տուժողի տարիքը, սեռը և առողջական վիճակը:

Ծանր ցավ կամ տառապանք. Ծանր ցավ կամ տառապանք պատճառելը որոշելիս հաշվի է առնվում կատարվածի ազդեցությունը կոնկրետ տուժողի վրա: Նույն արարքը տարբեր կերպ է ազդում տարբեր անձանց վրա՝ կախված նրանց ֆիզիկական և հոգեկան վիճակից և ցավին դիմանալու հանգամանքից:

Տուժողի կոնկրետ բնութագրիչները պարտադիր պետք է հաշվի առնվեն խոշտանգումը, դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը գնահատելիս, սակայն ՄԻԵԿ-ը նշում է որ դրանցից որևէ մեկը որոշիչ չէ, այլ դա պետք է գնահատվի համակցության մեջ: Որպես կանոն, անչափահասությունը կամ տարեց լինելը պետք է հաշվի առնվի կատարվածը գնահատելիս: Սակայն, օրինակ, Այդինն ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԿ-ը 1997թ.-ին դիրքորոշում է

հայտնել, որ 17-ամյա ծերբակալված աղջկա բռնաբարությունը դաժան վերաբերմունք է, և նման դիրքորոշման համար հիմք է հանդիսացել ոչ միայն տարիքային հատկանիշը:

Բեռլինսկին ընդդեմ Լեհաստանի գործով 2002թ.-ին ՄԻԵԴ-ը դիրքորոշում է հայտնել, որ բողոքաբերները մարզված բողիբիդերներ էին, ովքեր դիմադրություն են ցուցաբերել օրինական գործողություններ իրականացնող ոստիկաններին, ինչը չի կարող անտեսվել:

Առանձին պայմաններից Գեորգիևն ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ-ը 2005թ.-ի որոշմամբ նշել է, որ բողոքաբերի նկատմամբ կատարված գործողությունները չեն հասնում դաժանության նվազագույն շեմին, քանի որ դրանց տևողությունը եղել է կարճ՝ 1,5 ամիս: Միաժամանակ Բեցցիևն ընդդեմ Մոլդովայի գործով 37 օր կալանքի տակ պահելու դեպքում ՄԻԵԴ-ն արձանագրել է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում:

ՄԻԵԴ-ը, քննության առնելով ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտման առնչությամբ գործերը, շեշտել է, որ պետք է ուշադրություն դարձնել ՄԻԵԿ-ի այլ հոդվածների հնարավոր խախտումների վրա, մասնավորապես՝ ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների առնչությամբ: Օրինակ, Վայնոայթն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2006թ.-ին ՄԻԵԴ-ը դիրքորոշում է հայտնել, որ խուզարկությունն իրականացվել է անհարգալից, սակայն վիրավորանքներ չեն եղել, նրան չեն կպել, ինչը դիտվել է որպես ՄԻԵԿ-ի ոչ թե 3-րդ, այլ 8-րդ հոդվածի խախտում:

Ցավի կամ տառապանքի առկայությունը պարզելու համար տուժողի նկատմամբ անհապաղ պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն, իսկ վնասվածքի առկայության պարագայում՝ պարզվի դրա առաջացման մեխանիզմը: Վնասվածքների բացակայության դեպքում՝ պետք է նշանակվի տուժողի դատահոգեբանական փորձաքննություն՝ պարզելու համար հոգեկան տառապանքի առկայությունը: Նշված փորձաքննությունների եզրակացությունների հիման վրա պետք է իրականացվի համալիր գնահատում՝ ցավի կամ տառապանքի աստիճանը պարզելու համար:

Դիտավորություն. Խոշտնագումը դիտավորյալ արարք է: Այսինքն, եթե անձին պաշտոնյայի արարքի հետևանքով պատճառվել է ծանր

ցավ, սակայն այդ անձը մտադիր չէր պատճառել ծանր ցավ, ապա արարքը չի համարվի խոշտանգում: ՄԻԵԴ-ն այդ հարցին բազմաթիվ անգամ անդրադարձել է դատապարտյալների կամ կալանավորների պահման վատ պայմանների և գերբնակեցման հետևանքով առաջացած տառապանքների դեպքերը քննելիս: Ինչպես արդեն նշվել է 1.1 պարագրաֆում, դիտավորությունը պետք է լինի միայն ուղղակի:

Որոշակի նպատակ (խոստովանություն, տեղեկություններ ստանալը, ահաբեկելը, խտրականությունը...). Նշված նպատակի բացակայությունը բացառում է արարքը խոշտանգում որակելու հնարավորությունը: Ինքնին պետական պաշտոնյայի կողմից նման գործողություններ կատարելը դատապարտելի է և պետք է հանգեցնի պատասխանատվության, սակայն եթե նա դրանք իրականացրել է ոչ թե խոստովանություն կամ տեղեկատվություն ստանալու, ահաբեկելու կամ խոշտանգման հողվածում նշված այլ նպատակով, ապա արարքը որակվում է որպես պաշտոնական այլ հանցագործություն:

Պետության պատասխանատվություն. ՄԻԵԿ-ի համար պատասխանատու է պետությունը, որը պետք է իր բոլոր ջանքերն ու ռեսուրսներն ուղղի մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը: Խոշտանգման դեմ պայքարում պետությունը պետք է ոչ միայն սահմանի իրավական կարգավորումներ, այլ նաև ստեղծի գործուն և անաչառ մեխանիզմներ խոշտանգման դեպքերը բացահայտելու, քննելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցում, սակայն նվազ կարևոր չէ նաև կանխարգելիչ աշխատանքը՝ ուղղված թե՛ ընդհանուր և մասնագիտական իրազեկվածության բարձրացման, թե՛ խոշտանգման կիրառման հնարավորություն ունեցող պաշտոնատար անձանց նկատմամբ պատշաճ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ:

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության եվրոպական չափանիշները (անկախություն և անկողմնակալություն, ամբողջականություն, անհապաղություն, իրավասություն, տուժողի ներգրավվածություն և հասարակական վերահսկողություն) ՄԻԵԴ-ը վերահաստատել է նաև Հայաստանի դեմ կայացրած որոշումներում, մասնավորապես՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նալբան-

դյանն ընդդեմ Հայաստանի, Ջալյանը և այլք ընդդեմ Հայաստանի և այլն:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի հետևյալ ընթացակարգային խախտումները.

- քրեական գործի հանգամանքները բացառապես հիմնվել են իրադարձությունների մասին ոստիկանների կողմից տրամադրված տարբերակի վրա: Արդյունքում, դիմումատուն դարձել է այդ վարույթի միակ մեղադրյալը, մինչդեռ նշված ոստիկանները երբեք չեն համարվել հնարավոր կասկածյալներ և, ավելին, մասնակցել են միայն որպես վկաներ,
- քննություն իրականացնող մարմիններն առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տվել են ոստիկանների կողմից տրված վկայությանը և դրանով, կարելի է ասել, չեն ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվություն և անկախություն,
- դատաբժշկական փորձաքննությունը թեև նշանակվել է դեպքի հաջորդ օրը, սակայն անցկացվել է դեպքից օրեր անց,
- արդյունքում կազմված փորձագետի եզրակացությունը չէր պարունակում որևէ նշում դիմումատուի կրծքավանդակի և կողոսկրերի վնասվածքների վերաբերյալ, ինչն ընդամենը մի քանի օր առաջ արձանագրվել էր հիվանդանոցի բժիշկների կողմից,
- եզրակացությամբ որևէ պատասխան չէր տրվել քննիչի կողմից առաջադրված հիմնական հարցերից մեկին, այն է՝ թե դիմումատուի ամորձիին հասցված վնասվածքը պատճառվել է մե՞կ, թե՞ մի քանի հարվածով,
- կրկնակի դատաբժշկական փորձաքննությունը կատարվել է զգալի ժամանակ անց, որի հիմնական պատճառն այն էր, որ այդ եզրակացության պատճենը ներկայացվել է դիմումատուին այն կազմվելուց միայն մոտ մեկուկես ամիս հետո: Արդյունքում, նոր դատաբժշկական փորձաքննությունն անցկացվեց դեպքից մոտ երեք ամիս հետո,
- քննություն իրականացնող մարմինները չեն իրականացրել գործով այլ բժշկական ապացույցների գնահատում, մասնավորապես՝ հիվանդանոցի արձանագրությունների գնահատում, որոնցով, դի-

մումատուի ամորձիներին հասցված վնասվածքներից բացի, բացահայտվել են նաև նրա կրծքավանդակին և կողոսկրերին հասցված վնասվածքներ,

- չնայած դիմումատուի վնասվածքների լրջությանը՝ քննություն իրականացնող մարմինները չեն ուսումնասիրել հիվանդանոցում կազմված փաստաթղթերը, իսկ բժիշկները հարցաքննվել են դեպքից մոտ երկուսուկես ամիս հետո: Արդյունքում եվրոպական դատարանը եզրահանգել է, որ քննիչներին չի հաջողվել իրականացնել կարևոր նշանակություն ունեցող բժշկական ապացույցների՝ համապատասխան ժամկետներում, պատշաճ և օբյեկտիվ ձեռքբերում ու գնահատում,
- քննիչն անմիջապես չի մեկուսացրել և հարցաքննել դեպքին ներգրավված ոստիկաններին՝ դրանով իսկ չի կանխվել հնարավոր պայմանավորվածությունը,
- ոստիկանների հարցաքննության ժամանակ նրանց տրված հարցերը չեն գերազանցել մեկը կամ երկուսը, և դրանք հիմնականում սովորական բնույթի հարցեր են եղել և չեն պարունակել հստակեցման տարրեր,
- որևէ փորձ չի արվել դիմումատուի իրավաբանին հարցաքննելու առումով, ով ակնհայտորեն ներկա է եղել դեպքի գիշերը վերջինիս հարցաքննության ժամանակ կամ այն ոստիկանին հարցաքննելու առումով, ով կազմել է արձանագրություն՝ նշելով, որ դիմումատուն իրեն վատ է զգացել և պահանջել է բժշկական օգնություն,
- դիմումատուի և ոստիկանների առերեսումներն անցկացվել են ուշացումներով՝ ամիսներ անց՝ դրանով զգալիորեն նվազեցնելով այս միջոցների արդյունավետությունը, դիմումատուի և ոստիկանապետի տեղակալի միջև առերեսում չի անցկացվել:

Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի հետևյալ ընթացակարգային խախտումները.

- հաշվի առնելով այն, որ պետական մարմինները ներգրավվել էին քննելու միևնույն դատախազության աշխատակիցների գործողությունները, նման քննությունը դատարանը գնահատել է անկախության և անկողմնակալության պահանջներին չհամապատասխան

նող,

- քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը պատճառաբանված չէ: Քննություն իրականացնող մարմինը, առանց որևէ հիմնավորման, նախապատվությունը տվել է ոստիկանների կողմից տրամադրված ցուցմունքներին՝ չնայած, որ բժշկական բնույթի ապացույցները դիմումատուների օգտին էին, և դրանով չի ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվություն և անկախություն:
- ընդունելով, որ դիմումատուի ոտքերի վրա կապտուկներն առաջացել են այտուցվածությունից՝ փորձ չի արվել պարզելու այտուցվածության պատճառը: Լրացուցիչ բժշկական հետազոտություններ չեն նշանակվել, այս առնչությամբ չեն հարցաքննվել ո՛չ այդ եզրակացությունները տված բժիշկները, ո՛չ էլ որևէ այլ բժիշկ փորձագետներ,
- երրորդ դիմումատուի դեպքում քննություն իրականացնող մարմինը նույնիսկ չի հետազոտել առկա բժշկական բնույթի ապացույցները,
- ո՛չ առաջին դիմումատուն, ո՛չ երրորդը երբևէ չեն հարցաքննվել վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ, որևէ փորձ չի արվել բացահայտելու և հարցաքննելու որևէ այլ հնարավոր վկայի, իսկ դիմումատուների և ենթադրյալ վատ վերաբերմունք դրսևորած անձանց միջև չի կատարվել առերեսում:

Զայլանը և այլք ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի հետևյալ ընթացակարգային խախտումները.

- դիմումատուների առաջին բժշկական զննությունն իրականացվել է միայն 2004 թվականի հուլիսի 7-ին նրանց «Նուբարաշեն» ՔԿՀ ընդունելուց հետո ենթադրյալ վատ վերաբերմունքից ավելի քան 2 ամիս անց, որի պատճառով վնասվածքներ չեն հայտնաբերվել: ՄԻԵԴ-ն այս կապակցությամբ կարևորել է այն փաստը, որ մինչև դիմումատուների տեղափոխումը կալանավորված անձանց պահելու վայր, նրանք պահվել են ռազմական ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ում ավելի քան 2 ամիս, չնայած, որ ՀՀ ՔԴՕ-ով հստակ արգելվում է կալանավորված անձանց ՁՊՎ-ներում 3 օրից ավելի պահելը: Այս պահանջը ՄԻԵԴ-ը գնահատել է

որպես կարևոր երաշխիք ֆիզիկական բռնության դեմ, որին կարող են ենթարկվել ձերբակալված անձինք ՁՊՎ-ներում, քանի որ բոլոր կալանավորված անձինք պետք է անցնեն բժշկական զննություն կալանավորված անձանց պահելու վայր ընդունվելու ժամանակ:

- գրեթե ոչ ոք, բացառությամբ երկրորդ դիմումատուի, չի հարցաքննվել,
- ինչ վերաբերում է երկրորդ դիմումատուի հարցաքննություններին, ապա դրանք անցկացվել են ենթադրյալ կատարողներ հանդիսացող երկու քննիչների կողմից և, ամեն դեպքում, վատ վերաբերմունքի մասին մանրամասն շարադրված հարցեր չեն տրվել, հարցաքննությունը կատարվել է բողոքից ավելի քան մեկ ամիս անց,
- քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու վերաբերյալ որոշում չի կայացվել, և վատ վերաբերմունքի մասին հայտարարությունները մերժվել են զինվորական դատախազի գրությամբ՝ գրեթե առանց պատճառաբանության: Մասնավորապես, դրանք մերժելու միակ պատճառաբանությունն այն է եղել, որ դիմումատուները վատ վերաբերմունքի մասին հայտարարություններ չեն արել 2004 թվականի ապրիլի 27-ի դատական նիստի ժամանակ, որի ընթացքում որոշվել է նրանց նկատմամբ նախնական կալանք կիրառելու հարցը:
- վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունների առնչությամբ որոշակի քննություն իրականացվել է Սյունիքի մարզի դատարանի ու Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից՝ դիմումատուների գործով դատաքննության ընթացքում, բայց այն Վճռաբեկ դատարանի կողմից համարվել է ոչ պատշաճ, և դատարանը բեկանել է դիմումատուների մեղադրական դատավճիռը՝ ներառյալ այն հիմքով, որ անհրաժեշտ է իրականացնել վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունների լրացուցիչ քննություն:
- ինչ վերաբերում է այս որոշմանը հաջորդած քննությանը, ապա այն կատարվել է սպանության առթիվ դիմումատուների նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում, որում նրանք

ներգրավված են եղել որպես մեղադրյալներ: Ենթադրյալ վատ վերաբերմունքի մասով առանձին քրեական գործ չի հարուցվել: Ենթադրյալ կատարողներից ոչ ոք չի ներգրավվել որպես կասկածյալ, և նրանք շարունակել են հանդես գալ որպես վկաներ,

- բացի այդ, քննությունն իրականացվել է գինվորական դատախազության քննիչների կողմից, որի աշխատակիցներն առնչվել են ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորմանը, և, հետևաբար, կարող էին չբավարարել անկախության և անկողմնակալության պահանջը:⁶⁵ Խոշտանգումների քննության արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ հարցը պետք է դիտարկել հետևյալ հանգամանքների իրագործման տեսանկյունից՝
 1. իրենց իրավունքների մասին մարդկանց տեղյակ պահելը⁶⁶,
 2. ազատազրկման պաշտոնապես ճանաչված վայրերի օգտագործումը և գրանցամատյանների պատշաճ վարումը⁶⁷,
 3. արտաքին աշխարհի հետ կապից զրկված լինելու պայմաններում (ինկոմունիկադո) ազատազրկումից խուսափելը⁶⁸,

65 Մանրամասն տե՛ս՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի հունիսի 23-ի նիստի արձանագրություն N2-ի քաղվածքը:

66 ՄԻԵԴ-ը սահմանել է, որ պետք է ձերբակալված ցանկացած անձին պարզ, ոչ մասնագիտական, նրան հասկանալի լեզվով բացատրվեն իր ձերբակալության հիմնական օրենսդրական և փաստացի հիմքերը, որպեսզի, ցանկության դեպքում, այդ անձը կարողանա վիճարկել ձերբակալության օրինականությունը դատարանում: Հասկանալի լեզու ասելով պետք է դիտարկել ոչ միայն թարգմանիչի միջոցով դա իրականացնելը, ներառյալ խոլ և համր անձանց համար նախատեսված թարգմանիչների միջոցով, այլ նաև կիրառելով այնպիսի ձևակերպումներ և բառեր, որոնք հասկանալի են ելնելով նրա տարիքից, զարգացվածության աստիճանից և մտային ունակություններից:

67 Ազատազրկված անձանց արդյունավետ պաշտպանությունն երաշխավորելու համար անհրաժեշտ են պայմաններ, որոնց համաձայն ազատազրկված անձինք կպահվեն պաշտոնապես ճանաչված ազատազրկման վայրերում, նրանց անուններն ու ազատազրկման վայրերի անվանումները, ինչպես նաև ձերբակալության համար պատասխանատվություն կրող անձանց անունները կլինեն հաշվառված, որոնք մատչելի կլինեն շահագրգիռ անձանց՝ ներառյալ հարազատների և բարեկամների համար: ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ անձի ձերբակալությունը կամ կալանավորումն առանց ծանուցման ՄԻԵԿ-ում ամրագրված ազատության և պաշտպանված լինելու իրավունքից կամայականորեն զրկելու դեմ երաշխիքների «ամբողջական հերքում է»:

68 Խոշտանդումների դեմ հանձնաժողովը փաստել է, որ պետք է մշակվեն ինկոմունիկադո ազատազրկումը բացառող դրույթներ՝ որպես

4. ազատագրկման մարդկային պայմանները⁶⁹,
5. հարցաքննություն անցկացնելու սահմանափակումները⁷⁰,
6. փաստաբանի մատչելիությունը և փաստաբանի գործառույթ-

խոշտանգումների և դաժան վերաբերմունքի կանխարգելման երաշխիք: Ինկոմունիկադո ազատագրկումը չի համապատասխանում մարդու իրավունքների պաշտպանությանը, քանի որ «նպաստավոր պայմաններ է ստեղծում այլ պրակտիկայի, այդ թվում՝ խոշտանգումների համար», ինչպես նաև անարդար կերպով պատժում է ձերբակալված կամ ազատագրկված անձի ընտանիքին: Ազատագրկված անձի կապն արտաքին աշխարհի հետ ոչ միայն հանդիսանում է վերջինիս ուղղելու և սոցիալապես վերափնտեգելու լավագույն միջոցներից մեկը, այլ նաև բացառում է երրորդ անձանց՝ ծնողների, ամուսնու, երեխաների, այլ մերձավոր ազգականների, ընկերների և այլն, իրավունքների խախտման հնարավորությունը: Կապն արտաքին աշխարհի հետ բացառում է ազատագրկված անձի սոցիալական մեկուսացումը և հետևաբար՝ նրան լրացուցիչ տառապանքներ հասցնելը:

69 Ազատագրկման բոլոր վայրերից պետք է հեռացվեն այն բոլոր սարքավորումները, միջոցները կամ գործիքները, որոնցով հնարավոր է իրականացնել խոշտանգումներ կամ դաժան վերաբերմունք: Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները սահմանում են, որ զսպման միջոցները, ինչպիսիք են ձեռնաշղթաները, շղթաները, ոտնաշղթաները և զսպաշապիկները, ձերբակալված կամ կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել միայն անվտանգության նկատառումներով և ոչ որպես պատժի միջոց: Խոշտանգումների դեմ հանձնաժողովն ընդգծել է, որ «այն կալանավորվածը, որի նկատմամբ ուժային միջոցներ են կիրառվել, իրավունք ունի անհապաղ հետազոտվել և անհրաժեշտության դեպքում ստանալ բժշկական օգնություն»: Ազատագրկված անձի նկատմամբ կիրառվող հատուկ միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է արձանագրվի և ուսումնասիրվի՝ այդ միջոցի կիրառման անհրաժեշտության, ողջամտության և համաչափության տեսանկյունից:

70 Հարցաքննության անցկացման համար օրենսդրությամբ պետք է նախատեսվեն հստակ կանոններ: Ձերբակալված անձը պետք է տեղեկություններ ունենա հարցաքննությանը գտնվող բոլոր անձանց մասին: Անհրաժեշտ է մշակել հստակ կանոններ հարցաքննության թույլատրելի տևողության, հանգստի ժամանակահատվածների ու ընդմիջումների, հարցաքննության անցկացման վայրերի վերաբերյալ, արդյոք ձերբակալված անձը պետք է կանգնած լինի հարցաքննության ընթացքում, ինչպես նաև թմրանյութերի ու ալկոհոլի ազդեցության տակ գտնվող անձանց հարցաքննելու կարգը: Անհրաժեշտ է գրանցել հարցաքննության սկիզբն ու ավարտը, հարցաքննությանը ձերբակալվածների կողմից ներկայացված պահանջները և հարցաքննությանը ներկա գտնվող անձանց տվյալները: Հարցաքննվողն իր դիրքորոշումն արտահայտելու և դրա մասին արձանագրության մեջ համապատասխան գրառում իրականացնելու իրավունք և հնարավորություն պետք է ունենա:

ների հանդեպ հարգանքը⁷¹,

7. բժշկին դիմելու հնարավորություն /բժշկի մատչելիություն⁷²,

8. ձերբակալության օրինականությունը վիճարկելու իրավունքը⁷³:

Խոշտանգումների գործերով տուժողի (խոշտանգման ենթարկված անձանց) մանրակրկիտ հարցաքննությունը չափազանց կարևոր է, քանի որ նրանք հանդիսանում են ոչ միայն տեղեկատվության առաջնային աղբյուր, այլ նաև ցավի և տառապանքի անմիջական կրող: Տուժողների հարցաքննությունը կազմակերպելիս և հետևաբար հարցաքննության ընթացքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների վրա՝

- ենթադրյալ իրավախախտի (իրավախախտների) ճանաչումը,
- ենթադրյալ իրավախախտի (իրավախախտների) անցկացրած հարցաքննության կամ այլ գործողության մանրամասները,
- դատաբժշկական կամ դատահոգեբանական փորձաքննության եզրակացության, մարմնի քննման արձանագրության մեջ արտահայտված դիրքորոշումները և ձևակերպումները, և դրանց առնչու-

71 ՄԻԵԴ-ը մտահոգություն է հայտնել, որ երկարատև ձերբակալության ընթացքում իրավաբանական խորհրդատվություն չտրամադրելը կարող է խախտել արդար դատաքննության իրավունքը (տես՝ Մուռեյն ընդդեմ Միացյալ թագավորության, 1996 թ-ի փետրվարի 8-ի վճիռ): Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները նշում են, որ «Ձերբակալված, կալանավորված կամ բանտարկված անձինք պետք է փաստաբանի անհապաղ մատչելիություն ունենան, և այդ անձանց տրամադրվում են պատշաճ հնարավորություններ, ժամանակ ու պայմաններ փաստաբանի այցելության, նրա հետ առնչվելու ու խորհրդակցելու համար՝ առանց ձգձգման, միջամտության կամ գրաքննության և լիակատար գաղտնիության պահպանմամբ: Նման խորհրդատվություններ կարող են անցկացվել իրավապահ մարմինների պաշտոնակատար անձանց ներկայությամբ, բայց առանց նրանց կողմից լսվելու հնարավորության:

72 Ազատագրված, կալանավորված կամ ձերբակալված անձի բուժման համար պետության կողմից պետք է նախատեսվի բժիշկ, սակայն ցանկալի է, որ այդ անձինք հնարավորություն ունենան դիմելու իրենց ընտրած բժշկին: Բժշկական օգնությունը և սպասարկումը պետք է տրամադրվի առանց խտրականության:

73 Ազգային դատարանները պետք է օժտված լինեն ազատ արձակելու որոշում կայացնելու իրավասությամբ: Ընդ որում, այդ մարմինը պետք է որոշումներ կայացնի առանց հապաղելու, անաչառ լինի և կախում չունենա այն կառույցից, որն ազատագրվելու որոշումներ է կայացրել:

թյամբ տուժողի մեկնաբանությունները⁷⁴,

- տուժողի մասնակցությամբ իրականացված բժշկական բուլոր միջամտությունների կամ հետազոտությունների մասին փաստաթղթերի հավաքագրումը և ուսումնասիրումը,
- վկաների հայտնաբերումը, նույնացումը և դրանց հարցաքննությունը,
- դեպքի վայրի զննությունը, դեպքի վայրում այլ քննչական գործողությունների կատարումը՝ նպատակ հետապնդելով խոշտանգման մանրամասների, ներառյալ՝ խոշտանգման գործիքների, հայտնաբերումը,
- ազատագրկման վայրերում գրանցամատյանների, արձանագրությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Թվարկված գործողությունների իրականացումը հնարավորություն կընձեռի ամբողջական պատկեր ստեղծել կատարված գործողության, դրա վտանգավորության և դրանում խոշտանգման հատկանիշների առկայության կամ բացակայության մասին:

Խոշտանգման գործերի քննության ընթացքում պետք է հաշվի առնել ազատությունից զրկված անձանց հատուկ կատեգորիաների համար նախատեսված երաշխիքները: Այդ անձինք են կանայք, անչափահասները և հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, ովքեր պետք է ստանան լրացուցիչ պաշտպանություն և օգնություն⁷⁵:

ՄԻԵԴ-ը հստակ նշում է, որ խոշտանգման գործերով քննությունն իրականացվի անհապաղ, այսինքն՝ խախտումների կասկածի կամ բողոքի ի հայտ գալուց անմիջապես հետո առավելագույն կարճ ժամկետում:

74 Եթե տուժողը մահացել է, ապա հիմնականում տեղեկատվությունը ստացվում է դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության արդյունքների ուսումնասիրությամբ:

75 Այս հարցը մանրամասն չի ներկայացվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դուրս է այս ձեռնարկի համատեքստից, ինչպես նաև այն, որ այս հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել 2017թ.-ին հրատարակված Դ. Թոմասյանի և Ու. Յորդաշի «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը» վերտառությամբ ձեռնարկում, որով համապատասխան դասընթացներ կազմակերպվել են ՀՀ արդարադատության ակադեմիայում դատավորների, դատախազների և քննիչների համար:

խոշտանգումների քննության անկյունաքարային հարց է անհապաղ և ճիշտ ժամանակին արձագանքել բոլոր բողոքներին⁷⁶: Այդ համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, մասնավորապես.

- քննության մեկնարկի պահը և ցուցմունքներ ստանալու հարցում ձգձգումները⁷⁷, և
- նախնական քննության վրա ծախսված ժամանակի ընդհանուր տևողությունը⁷⁸:

Ժամանակ չկորցնելը հատկապես կարևոր է բժշկական զննությունների արդյունավետության և վկաների ցուցմունքների օգտակարության և հուսալիության տեսանկյունից, ինչը բազմիցս ընդգծվել է ՄԻԵԴ-ի կողմից:⁷⁹

Քննություն իրականացնելու պարտականությունն «արդյունքի պարտականությունն է, այլ միջոցների պարտականությունն է»: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգի մի եզրակացության, որը համապատասխանում է գանգատաբերի կողմից նշված դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը, և այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ են, ապա նաև հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը, ու արդարացված լինելու դեպքում՝ նրանց պատժելուն⁸⁰:

Ներկայացված ընդհանրական չափանիշներն ու մոտեցումներն ընդհանուր առմամբ ուղենիշային են՝ խոշտանգման գործերը քննելիս, և պետք է հաշվի առնվեն դատավորների, դատախազների և քննիչների կողմից նման գործեր քննելիս կամ հսկողություն իրականացնելիս: Պետությունը կարող է ավելի լայն երաշխիքներ նախատեսել⁸¹ խոշտան-

76 *Sէն, Labita v Italy* (Application no. 26772/95), 6 April 2000.

77 *Sէն, Timurtaş v Turkey* (Application no. 23531/94), 13 June 2000 և *Tekin v Turkey* (Application no. 22496/93), 9 June 1998.

78 *Sէն, Indelicato v Italy* (Application no. 31143/96), 18 October 2001.

79 *Sէն, Առաքելյան Ս., Կոզմա Ջ. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը*: Երևան, 2016, էջ 102:

80 *Sէն, Առաքելյան Ս., Կոզմա Ջ. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը*: Երևան, 2016, էջեր 107-108:

81 Մինչ միջազգային օրենսդրությունը սահմանում է հիմնական նվազագույն

գումների դեմ պայքարում՝ չսահմանափակվելով միջազգայնորեն ընդունված պահանջներով:

Հարկ է նաև նշել, որ խոշտանգման բացարձակ արգելքի տեսանկյունից անթույլատրելի է խոշտանգում կատարած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու, համաներման կամ ներման հետևանքով: Ընդունելի չէ նաև նման անձանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը:

ՀՀ քր. օր.-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասի, 309.1-րդ հոդվածի, 341-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համար վաղեմության ժամկետներ չկիրառելու պայման նախատեսված չէ:

Սակայն, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի, մասնավորապես՝ Աբդուլսամետ Յամանն ընդդեմ Թուրքիայի գործի համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ պետության ներկայացուցիչը դատապարտվել է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի համար, «արդյունավետ միջոցի» նպատակների իրագործման տեսանկյունից չափազանց կարևոր է, որ քրեական վարույթ իրականացնելն ու անձին պատժի ենթարկելը սահմանափակված չլինեն վաղեմության ժամկետներով, ինչպես նաև անթույլատրելի է այդ անձանց նկատմամբ համաներման կամ ներման կիրառումը⁸²:

Հարցի հետ կապված ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ հանձնաժողովը 26.01.2017թ.-ի Հայաստանի վերաբերյալ 4-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում կոչ է արել բացառել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերում հանցանք կատարած անձանց վաղեմության ժամկետն անցնելու, համաներման կամ ներման հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու իրավական հնարավորությունը:⁸³

չափանիշները, ազգային չափանիշների մշակման ընթացքում կարող է կիրառելի լինել տարբեր երկրների լավագույն փորձը, որը հաշվի է առնվում օրենսդրության բարեփոխման ընթացքում:

82 Abdulsamet v Turkey (Application no. 32446/96), 2, November, 2004:

83 Պետք է նշել, որ 2017 թվական մարտի 7-ին ընդունվել է «Ներման մասին» ՀՀ օրենքը, որի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ներում չի շնորհվում ՀՀ քր. օր.-ով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված

Խոշտանգման բացարձակ արգելքի տեսանկյունից անընդունելի է մեղավոր անձանց քրեական պատասխանատվությունից ազատումը՝ ինչպես հայեցողական լիազորությունների կիրառման, այնպես էլ արարքը կատարելուց հետո որոշակի ժամանակահատված անցնելու հետևանքով: Դա չի բխում թե՛ միջազգային հանրաճանաչ չափանիշներից, թե՛ խոշտանգման դեմ պայքարի և դրա կանխարգելման տեսանկյունից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Միջազգային և իրավական փաստաթղթեր

1. Մարդու իրավունքների 1948թ.-ի համընդհանուր հռչակագիր
2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների 1966թ.-ի միջազգային դաշնագիր
3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիա
4. Բանտարկյալների հետ վարվեցողության 1957թ.-ի նվազագույն ստանդարտ կանոններ
5. Իրավապահ մարմինների պաշտոնյա անձանց վարքի 1979թ.-ի կանոններ
6. Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության 1988թ.-ի սկզբունքների ժողովածու
7. Խոշտանգումներից և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին 1975թ.-ի հռչակագիր
8. Ձերբակալվածներին և կալանավորվածներին խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանող բժշկական անձնակազմի, հատկապես բժիշկների դերին առնչվող բժշկական էթիկայի 1982թ.-ի սկզբունքներ
9. Խոշտանգումների և դաժան, անմարդկային և արժանապատվության նվաստացնող վերաբերմունքի ու պատժի արդյունավետ հետաքննության և փաստագրման 1999թ.-ի սկզբունքներ (Ստամբուլի արձանագրություն)
10. Խոշտանգումներից և դաժան, անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984թ.-ի կոնվենցիա
11. ՀՀ Սահմանադրություն, 2015թ.
12. ՀՀ քրեական օրենսգիրք, 2003թ.
13. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1998թ.
14. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 2004թ.
15. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, 2002թ.

16. ՀՀ կառավարության 03.08.2006թ.-ի N1543-Ն որոշումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին
17. ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովի եզրակացություն՝ Բուաբդալլահ Լտաիֆի բողոքի հիման վրա. N° 189/2001: Թունիս, CAT/C/31/D189/2001/)
18. ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հանձնաժողովի՝ Էնկարնասյուն Բլանկո Աբասի բողոքի հիման վրա տրված եզրակացություն (հաղորդում N° 59/1996: Իսպանիա, CAT/C/20/D/59/1996)

Դատական ակտեր

1. Ալիկ Մաթևոսյանի վերաբերյալ 26.03.2010 թ. ՎԲ–04/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
2. Արայիկ Գզոյանի վերաբերյալ 12.02.2010 թ. ԵԱԲԴ/0049/01/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
3. Արսեն Արծրունու վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0126/13/11 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
4. Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ 01.11.2012 թ. ԱՐԴ/0176/01/11 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
5. Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ 28.11.2013 թ. ՎԲ–05/13 գործով որոշում
6. Էմմա Կարապետյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.07.2007 թ.-ի թիվ ՎԲ-133/07 ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
7. Իլլարիոն Նունուշյանի վերաբերյալ 05.06.2015 թ. ԵՇԴ/0070/01/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
8. Համլետ Սահակյանի վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
9. Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի և Արայիկ Զալյանի վերաբերյալ 22.12.2006 թ. ՎԲ–176/06 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
10. Սվետլանա Գրիգորյանի վերաբերյալ 11.05.2011 թ. ԵԿԴ/0281/01/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում
11. Ռուզաննա Նիսալյանի վերաբերյալ 31.05.2014 թ. ԵԿԴ/0118/11/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում

12. A v. France (Application no. 14838/89), 23 November 1993.
13. Aktas v. Turkey (Application no. 24351/94), 24 April 2003.
14. Akulinin and Babich v. Russia (Application no. 5742/02), 2 October 2008.
15. Assenov and others v. Bulgaria (Application no. 90/1997/874/1086), 28 October 1998.
16. Aydin v. Turkey (Application no. 57/1996/676/866), 25 September 1997.
17. Barabanshchikov v. Russia (Application no. 36220/02), 8 January 2009.
18. Bati and others v. Turkey (Application no. 33097/96 and 57834/00), 3 June 2004.
19. Cestaro v. Italy (Application no. no. 6884/11), 7 April 2015.
20. Kmetty v. Hungary (Application no. 57967/00), 16 December 2003.
21. Krastanov v. Bulgaria (Application no. 50222/99), 30 September 2004.
22. Labita v. Italy (Application no. 26772/95), 6 April 2000.
23. M v. Netherlands, (Application no. 39339/98), 8 April 2003.
24. Menesheva v. Russia (Application no. 59261/00), 9 March 2006.
25. Mikheyev v. Russia., (Application no. 77617/01), 26 January 2006.
26. Ochelkov v. Russia (Application no. 17828/05), 11 April 2013.
27. Poltoratskiy v. Ukraine (Application no. 38812/97), 29 April 2003.
28. Riera Blume and others v. Spain (Application no. 37680/97), 14 October 1999.
29. Romanov Vladimir v. Russia (Application no. 41461/02), 24 July 2008.
30. Sevtap Veznedaroglu v. Turkey (Application no. 32357/96), 11 April 2000.
31. T.A. v. Sweden, (Application no. 226/2003), 6 May 2005.
32. Toteva v. Bulgaria (Application no. 42027/98), 19 May 2004,
33. Van Vondel v. Netherlands, 38258/03, 25 հոկտեմբերի, 2007.
34. Virabyan v. Armenia, (Application no. 40094/05), 2 October 2012 և այլն.
35. Դատախազն ընդդեմ Ֆուրունձիայի, Նախկին Հարավսլավիայի համար ստեղծված միջազգային քրեական դատարան, վճիռ առ 10 դեկտեմբերի 1998թ., գործ IT95-17/I-T.

Մասնագիտական գրականություն

1. ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի հունիսի 23-ի նիստի արձանագրություն N2-ի քաղվածք

2. ՀՀ հատուկ քննչական ծառայություն. Խոշտանգման գործերով քննության կազմակերպման և իրականացման ուղեցույց/ Գիտ. խմբագիր՝ Վ. Շահինյան. Եր.: Տիգրան Մեծ, 2014:
3. ՀՀ քրեական դատավարություն. ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 2011:
4. Ֆոլի Բ. Պայքար խոշտանգումների դեմ. Ձեռնարկ դատախազների և դատավորների համար/ Լ. Պետրոսյանի թարգմանությամբ. Երևան:
5. Առաքելյան Ս., Կոզմա Զ. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը: Երևան, 2016:
6. Воеводин Л.Д. Юридический статус личности в России. М.: Изд-во МГУ, Инфра-М, Норма, 1997:
7. Кабанов П. Н., Уголовная ответственность за побои и истязания: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2006:
8. Кривошеин П., Пытка: понятие и признаки// Уголовное право, 2005, № 5, էջ 41:
9. Курочкин В. П. Уголовно-правовая характеристика истязания. Сборник научных трудов профессорско-преподавательского состава по итогам отчетов кафедр по НИР за 2012, № 7, էջեր 167-168:
10. Пестерева Ю.С. К вопросу о понятии пытки// Новая редакция УК России: попытка теоретического осмысления: Материалы межвуз. научн. конф. Омск: Омская академия МВД. 2011:
11. Романов В. В., Юридическая психология. Курс лекций. էլ. տարբերակ՝ <http://sergvelkovelli.com/yuridicheskaya-psixologiya.html>
12. Российское уголовное право. Особенная часть. Т. 2: учебник. 3-е изд. /Под ред. Л. В. Иногамовой-Хегай и др. М., 2011:
13. Соловьёва Д.Р., Семькина Л.А. Проблемы квалификации истязания с применением пытки// Донецкие чтения 2017: Русский мир как цивилизационная основа научно-образовательного и культурного развития Донбасса: Материалы Международной научной конференции студентов и молодых ученых (Донецк, 17-20 октября 2017 г.). Том 7: Юридические науки. Ч. 2: Уголовное право и процесс,

административное и финансовое право/ Под общей редакцией проф. С.В. Беспаловой. Донецк: Изд-во ДонНУ, 2017:

14. Уголовное право России. Особенная часть: учебник / Под ред. О.Г. Ковалёва. М., 2007:
15. Уголовное право. Особенная часть: учебник для вузов / Под ред. И.Я. Козаченко и др. М., 1997:
16. Чечель Г.И. Жестокий способ совершения преступления против личности: уголовно-правовое и криминологическое исследование. Нальчик: Ставропольское книжное изд-во, 1991:

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրինակելի պլան խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերի քննության

1. Եթե առկա է անձի նկատմամբ բռնություն գործադրելու մասին տեղեկություն, անհրաժեշտ է նշանակել դատաբժշկական փորձաքննություն: Իսկ եթե նախկին (մայր) քրեական գործով այն արդեն իսկ նշանակել է, ուրեմն կոնկրետ հարցադրումներ ավելացնել՝ նոր հանգամանքներ պարզելու համար՝ մեխանիզմ, ժամկետ և այլն:
2. Դիմողից ստանալ գրավոր հաղորդում՝ պարտադիր նախազգուշացմամբ:
3. Դիմողին ճանաչել տուժող:
4. Հարցաքննել դիմողին, հաղորդում տվողին, ինչպես նաև այն անձանց, ում գործողությունների վերաբերյալ բողոք է ներկայացվում:
5. Պարզել հանարավոր դեպքի բոլոր ականատեսներին, վկաներին և անհապաղ հարցաքննել վերջիններիս:
6. Գրավոր կարգով ստանալ նախկին (մայր) քրեական գործի կամ նյութերի պատճենները, դրանք զննել՝ այդ մասին կազմելով արձանագրություն:
7. Հարցաքննել այն պաշտոնատար անձանց, ովքեր գործի բերումով շփվել են և/ կամ դատավարական գործողություններ են կատարել (բերման ենթարկել, անձնական խուզարկություն, քննչական փորձարարություն և այլն), ինչպես նաև հարցաքննել այդ գործողություններին մասնակցած ընթերականերին, մասնագետներին, պաշտպանին, այլ մասնակիցներին, չչահագրգռված երրորդ անձանց:
8. Դատարանից ստանալ տուժողի՝ մայր գործով կալանքի, սանկցիայի քննարակման նիստերի ձայնագրությունները, զննել դրանք, պարզել, թե ինչ է մեղադրյալը հայտարարել:
9. Քննել ՁՊՎ-ում և ՔԿՀ-ում գտնվող անձին բուժզննում կատարած անձանց, բժիշկներին՝ հայտնաբերված վնասվածքների և դրանց մասին անձի հայտարարությունների մասին:
10. Զննել ՁՊՎ և ՔԿՀ մուտքի մատյանները և անձնական գործի փաստաթղթերը՝ պարզելու համար, թե ժամը քանիսին են անձին բերել, ինչ են նրա մոտ հայտնաբերել անձնական խուզարկությամբ և մարմ-

նի քննմամբ:

11. Զննել ոստիկանության բաժնի բերման ենթարկվածների հաշվառման մատյանը և շենք մուտք ու ելք գործած քաղաքացիների հաշվառման մատյանը՝ անձանց մուտքի և ելքի ժամերը ֆիքսելու համար:
12. Ճշտել ՁՊՎ, ՔԿՀ և ոստիկանության բաժնի տարածքների տեսաձայնագրվելու հանգամանքը, տեսաձայնագրությունների առկայության դեպքում առգրավել դրանք, զննել, նշանակել փորձաքննություններ:
13. Համապատասխան հանձնարարություններ տալ ոստիկանության ստորաբաժանումներին:
14. Քննությամբ ճշտել ձերբակալման պահին անձի հագուստի գտնվելու վայրը, առգրավել, զննել, նշանակել փորձաքննություններ:
15. Քննության ժամանակ հայտնաբերված խախտումների մասին գրել միջնորդագրեր:
16. Ոստիկանությունից գրավոր կարգով պարզել, թե դեպքի վերաբերյալ ծառայողական քննություններ կատարվել են, թե՛ ոչ, եթե այո, ապա առգրավել պատճենները:
17. Տուժողից ճշտել դեպքի մասին այլ մարմիններին բողոքելու, այլ մարմիններում քննություն կատարվելու կամ կատարած լինելու հանգամանքը: Տուժողից գրավոր հարցադրմամբ պարզել՝ իր ասածները հաստատող ինչ վկաներ, նկարներ, ձայնագրություններ, փաստաթղթեր կամ այլ ապացույցներ կան և որտեղ:
18. Ենթադրաբար խոշտանգում իրականացրած պաշտոնատար անանց կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ տալուց անմիջապես հետո, ՀՀ ՔԴՕ 152-րդ հոդվածի համապատասխան, ժամանակավորապես դադարեցնել նրա պաշտոնավարումը:
19. Անհրաժեշտության դեպքում տուժողի կամ դատավարության այլ մասնակիցների նկատմամբ կիրառել ՀՀ ՔԴՕ նախատեսված պաշտպանության միջոցներ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության
աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են
հեղինակները, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական
միության տեսակետները:



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Եվրոպական միությունը Հայաստանի քաղաքացիների համար

«Մարդու իրավունքների հթանում և Պաշտպանություն» ծրագիր



Empowered lives.
Resilient nations.



յուրաքանչյուր երեխայի համար